# Ազգ Azg

11 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2010 ՇԱԲԱԹ 165 (4545)

ISSN: 1829-1651


# Հայոց ցեղասպանության հերքումը՝ քրեորեն պատժելի արարք

**Petition-genocidearmenian.com** Սա այն ինտերնետային հասցեն է, որտեղ Մարսելի քաղաքապետի օգնական, ազգությամբ հայ **Դիդիեր Փարաքյանը** տեղադրել է տեսանյութ՝ ընդգծելով, որ հասունացել է մարդու իրավունքների պաշտպան Ֆրանսիայում ու առհասարակ Եվրոպայում Հայոց ցեղասպանության հերքումը պատժելի համարելու ժամանակը:

Դիդիեր Փարաքյանը ցեղասպանությունը վերապրած ընտանիքի զավակ է:

Ֆրանսիայի Սենատին ներկայացված «Հայոց ցեղասպանությունը հերքելը քրեորեն պատժելի արարք համարող» օրենքի նախագիծը վավերացնելու համար նա վերոնշյալ կայքում նախաձեռնել է նաեւ համացանցային ստորագրահավաք: Ermenihaber.am լրատվական ցանցի փոխանցմամբ՝ օրինագիծն ավելի վաղ արժանացել էր Ֆրանսիայի խորհրդարանի հավանությանը:

Հ. Հ.

# Ադրբեջանին ստիպեցին շտկել իր ապակառուցողականությունը

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ադրբեջանական կողմը հանդես է եկել առաջարկությամբ՝ հետաձգելու ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում իր նախաձեռնությամբ քննարկման ներկայացված բանաձեւի նախագիծը: Ադրբեջանը խնդրել է բանաձեւի նախագծի քննարկումը տեղափոխել հաջորդ նստաշրջանի օրակարգ: Ըստ ադրբեջանական լրատվամիջոցների՝ այսպիսի հայտարարությամբ էր հանդես եկել ՄԱԿ-ում Ադրբեջանի մշտական ներկայացուցիչ Աղշին Մեհդիեւը բանաձեւի նախագծի քննարկումից առաջ՝ սեպտեմբերի 9-ին:

Ադրբեջանի արտգործնախարարության հաղորդագրության համաձայն, այդպիսի որոշում կայացվել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հայտարարության հիման վրա, որտեղ նշվում է սեպտեմբերի վերջին կամ հոկտեմբերի կեսերին Լեռնային Ղարաբաղի հարակից շրջաններ առաքելության անցկացման մասին:

Եթե Ադրբեջանն իսկապես բանաձեւի քննարկումն ու քվեարկությունը հետաձգելու որոշում է կայացրել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների վերջին հայտարարության հիման վրա, ապա առավել քան տարօրինակ է, որ այդ հայտարարությունը հասկանալու եւ դրա հիման վրա ՄԱԿ-ում եւս մեկ անգամ նույն այդ համանախագահների կողմից ապակառուցողական որակվող բանաձեւի նախագիծը հետաձգելու որոշման համար անհրաժեշտ է եղել մի քանի օր: Խնդիրն այն է, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները հայտարարույթամբ հանդես եկան դեռեւս սեպտեմբերի 6-ին, իսկ Ադրբեջանը բանաձեւի քննարկման հետաձգման առաջարկն արեց միայն այդ քննարկման համար նշանակված օրը՝ սեպտեմբերի 9-ին:

Չնայած ադրբեջանական կողմի «բացատրություններին», ակնհայտ է, որ Ադրբեջանը չի կարողացել դիմակայել ճնշումներին, սակայն նախընտրել է իր արդարացումը մեկնաբանել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների մի քանի օր առաջ արված հայտարարության համատեքստում:

Տես էջ 2

ՕՐԱԽՆԴԻՐ

# Պատարագին չմասնակցելու Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի որոշումը շոկի ներգործություն է ունեցել Վանում

## *Վանի գործարարները ձեռնամուխ են լինում անձնական նախաձեռնությամբ տեղադրելու Սուրբ Խաչ եկեղեցու խաչը*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Ինչպես նշել էինք նախորդ համարում, վարչապետ Էրդողանի կառավարության որոշումով վերանորոգված Վանա լճի Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցու բացումը կատարվել է 2007-ի մարտի 29-ին, եւ եկեղեցին առաջվա պես սկսել է գործել որպես թանգարան: Այս հանգամանքը, սակայն, չէր խանգարել Կ. Պոլսո հայոց պատրիարք Մեսրոպ Բ Մութաֆյանին, որ իր իսկ պատվերով պատրաստված խաչը հենց 2007-ին ուղարկի Վան:

Այլ կերպ, Սուրբ Խաչ եկեղեցու խաչը 3 տարի շարունակ տեղադրման է սպասում: Մինչդեռ եկեղեցու վերանորոգումից հետո թուրքական իշխանությունները խաչի տեղադրման խոստումներ էին տալիս, իսկ ս. թ. մայիսի 26-ին մշակույթի եւ զբոսաշրջության նախարար Էրթուղրուլ Գյունայը հավաստիացնում էր. «Եկեղեցու խաչը կտեղադրվի մինչեւ սեպտեմբերի 19-ի ժամերգությունը»:

Թվում էր, թե թուրքական իշխանությունները կհետեւեն իրենց խոստումին: Այդպիսով Սուրբ Խաչ եկեղեցում մատուցվող պատարագին կմասնակցեն Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի ու Երուսաղեմի հայոց պատրիարքարանի ներկայացուցիչները, որոնք, ի տարբերություն Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսության, ընդունել էին պատարագին մասնակցելու Պոլսո հայոց պատրիարքարանի հրավերը:

Տես էջ 3

# Վեհափառ հայրապետի օրհնությամբ դրվել է Բոստոնի Եղեռնի հուշարձանի հիմնաքարը

Ամենայն հայոց հայրապետ Գարեգին Երկրորդի նախագահությամբ կատարվել է Բոստոնի Եղեռնի հուշարձանի օրհնության եւ հիմնաքարի արարողությունը: Վեհափառ հայրապետը Բոստոն է ժամանել սեպտեմբերի 9-ին: Գաղութի բոլոր կազմակերպությունները՝ «Հայկական Ժառանգության այգու հիմնադրամ» անվան տակ, աշխատել են 6 տարի շարունակ եւ հաղթահարելով թուրքական խոչընդոտները՝ ձգտել են իրականություն դարձնել Եղեռնի հուշարձանի կառուցումը: Արարողությանը ներկա են եղել Մասաչուսեթսի նահանգապետ Դուվալ Պատրիկը, Բոստոնի քաղաքապետ Թոմաս Մենինոն, նախկին նահանգապետ եւ նախագահական թեկնածու Ջորջ Դուքաքիսը, պետական, քաղաքական բազմաթիվ ներկայացուցիչներ, նաեւ 2 հազարի հասնող մեր հայրենակիցները:

Հուշարձանի կառուցման աշխատանքները, որոնք շուտով սկսվելու են, կավարտվեն մի տարվա ընթացքում:

Ի. Պ.



*Հուշարձանի եւ շրջակայքի մակետը*

# Ղազախստան-Ռուսաստան-Չինաստան համատեղ զորավարժություններ Ջամբուլ մարզում

Երեկ այդ մասին կայքէջում տեղեկացրել է թուրքական «Դունյա Բյուլտենի» լրատվական կենտրոնը: Ահա թե ինչ է գրել. «Ղազախստանը հայտարարեց, որ Ռուսաստանի եւ Չինաստանի հետ պատրաստվում է համատեղ զորավարժություններ անցկացնել: Ղազախստանի պաշտպանության նախարարությունից ստացած տեղեկության համաձայն, Շանհայի համագործակցության կազմակերպության շրջանակում անցկացվող «Խաղաղության առաքելություն-2010» զորավարժությունները սեպտեմբերի 12-ին կսկսվեն Ղազախստանի Ջամբուլ մարզում: Զորավարժություններին Ղազախստանից, Ռուսաստանից եւ Չինաստանից կմասնակցեն 3 հազար զինծառայողներ: Նույն երկրների մասնակցությամբ նախորդ զորավարժությունները 2007-ին անցկացվել էին Ռուսաստանում: Ի դեպ, այս տարվա օգոստոսին «Տափաստանի արծիվ» պայմանական անունով Ղազախստանը համատեղ զորավարժություններ էր անցկացրել նաեւ Անգլիայի եւ ԱՄՆ-ի հետ»:

Հ. Չ.

# Հրանտ Դինքի անունով մանկական զբոսայգի Թուրքիայում

Այսօր Ստամբուլի Քընալը կղզում տեղի կունենա «Ակօս» շաբաթաթերթի սպանված խմբագրապետ Հրանտ Դինքի անունը կրող մանկական զբոսայգու բացման արարողությունը:

«Հրանտ Դինքին ճանաչել եմ վաղուց, շատ արժեքավոր լրագրող էր եւ հայրենասեր անձնավորություն: Նրա ողբերգական մահվան լուրը մեծ ցավով ընդունվեց Ադալարում: Կարծում ենք, որ նրա նման արժեքավոր մարդկանց անունները միշտ պետք է հիշվեն Ադալարում: Դինքը սիրում էր երեխաներին, նրա հոգին լի էր մարդկանց հանդեպ սիրով: Երեխաները երջանիկ կլինեն՝ այստեղ տեսնելով նրա անունը», Ադալարի համայնքային խորհրդի նախագահի, Ժողովրդա-հանրապետական ընդդիմադիր կուսակցության ներկայացուցիչ **Մուստաֆա Ֆարսաքօղլուի** խոսքերն է փոխանցում թուրքական «Ռադիկալ» թերթը:

Հ. Հ.

# Հայ տնտեսագետը հրավիրվել է Թուրքիա



Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն Թուրքիա է հրավիրել հայազգի տնտեսագետ Տարոն Աջեմօղլուին, որպեսզի վերջինս նպաստի Թուրքիայի տնտեսության զարգացմանը: Ըստ News.am-ի՝ Տարոն Աջեմօղլուն տնտեսագիտության պրոֆեսոր է ԱՄՆ-ի Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտում: Տարոն Աջեմօղլուն նաեւ ակադեմիական հետազոտություններ է իրականացնելու Թուրքիայում:

Հայազգի տնտեսագետը, անդրադառնալով Թուրքիայի վրա համաշխարհային ճգնաժամի ունեցած ազդեցությանը, ասել է՝ թուրքական տնտեսության հիմքերն առողջ են, սակայն Թուրքիայի համար հիմնական վտանգը քաղաքական անկայունությունն է:

Ի. Պ.

# Սաակաշվիլու վրաց-ադրբեջանական համադաշնային բլեֆը

Վրաստանն ու Ադրբեջանը բնավ էլ համադաշնության չեն գնում, իսկ Վրաստանի նախագահի հայտարարությունը՝ հարեւան Ադրբեջանի հետ համադաշնություն ստեղծելու մասին, լրիվ հուզական ոլորտից է եղել: Թերեւս սա է այն հիմնական բացատրությունը, որ հնարավոր էր տալ Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլու՝ Բաքվում Ադրբեջանի նախագահ Ալիեւ կրտսերին հյուրընկալելու ժամանակ համադաշնության մասով արած հայտարարության համար:

Վրաստանի արտգործնախարարությունը իրապես ոչ հետեւողական է իր քայլերում, ոչ էլ հուսալի կարելի է ընդունել այդ գերատեսչության որեւէ ներկայացուցչի հայտարարությունը, քանի որ մեկ այլ, ոչ պակաս կարեւոր պաշտոնյա, ամենայն հանգստությամբ կարող է տրամագծորեն հակառակ բաներն ասել ու բնավ էլ դրա համար անհարմար չզգալ: Բանն այն է, որ Վրաստանի արտգործնախարար **Գրիգոլ Վաշաձեն** հերքել է վրաց-ադրբեջանական համադաշնության ստեղծման մասին տեղեկությունը:

Վաշաձեի բացատրությամբ, «Սաակաշվիլու համադաշնություն ստեղծելու նախաձեռնությունը հայտարարություն էր Ադրբեջանի եւ Վրաստանի առանձնահատուկ բարիդրացիական հարաբերություններն ընդգծելու համատեքստում»:

«Պետք է ուշադիր լսել նախագահին: Նա քանիցս կրկնեց, որ Վրաստանի եւ Ադրբեջանի հարաբերությունները դուրս են եկել ռազմավարական հարաբերություններից եւ փաստացի ձեռք են բերել համադաշնության մեջ գտնվող երկրների կապերի տեսք», ասել է Վաշաձեն: Դա, ըստ վրաց արտգործնախարարի, չի նշանակում, թե Վրաստանն ու Ադրբեջանը ստեղծելու են ընդհանուր իրավական հիմք, միավորելու են օրենսդիր մարմիններն ու սահմանադրությունները: «Մենք խոսում ենք այն մասին, որ Վրաստանն ու Ադրբեջանը սերտ ու կոորդինացված հարաբերություններ ունեն», հայտարարել է Վաշաձեն:

Իսկապես, դժվար է հասկանալ, թե վրացական ղեկավարության որ հայտարարություններին եւ ինչպես պետք է վերաբերվել այն դեպքում, երբ որեւէ այլ պահի, ըստ նպատակահարմարության, կարող է արվել տրամագծորեն այլ հայտարարություն: Գրիգոլ Վաշաձեն հերթական անգամ կարծիքների եւ տեղեկության տրամագծորեն հակառակ դիրքորոշում է ի ցույց դնում իր իսկ տեղակալի՝ Նինո Քալանդաձեի արտահայտած կարծիքների հետ, քանի որ վերջինս իր ժամանակին պարզաբանել էր, որ համադաշնության ստեղծման մասին հայտարարվել է, եւ արդեն համաձայնեցվում են տեխնիկական հարցեր: «Նախագահն իր մոտեցումն ասել է, եւ հիմա գործը մնացել է դիվանագետներին», ասել էր Քալանդաձեն՝ մեկնաբանելով վրացական կողմի՝ համադաշնություն ստեղծելու առաջարկն ու ադրբեջանական լռությունն այդ առնչությամբ:

Առավել հավանական է, որ Սաակաշվիլին իրեն հատուկ ձեւով ու մոտեցմամբ, համադաշնություն ստեղծելու հայտարարույթամբ փորձեց «հողը շոշափել», իմանալ Ալիեւի կարծիքը նման հեռանկարի առնչությամբ, սակայն դրանից ոչինչ դուրս չեկավ: Ադրբեջանն էլ, իր հերթին, լռությամբ էր արձագանքում հարցումներին համադաշնություն ստեղծելու հավանականության մասին՝ չիմանալով անելիքը:

Ամեն դեպքում, երբ նման հարցերում Վրաստանը չի կարողանում մեկ կարծիքով, մեկ դիրքորոշմամբ հանդես գալ, թերեւս պետք չէ շատ մտահոգվել, երբ հարեւանները Հայաստանի առնչությամբ անտեղի, ոչ կոռեկտ հայտարարություններ են անում. այդպիսիք են, ստացվում է, վրացիք:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Ադրբեջանի համար հատուկ ընդգծում, որ Մինսկի խումբը միակ ձեւաչափն է

## *Զգուշացումներն Ադրբեջանին ակնհայտ են դառնում ոչ միայն Եվրոմիության, այլեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից*

2001 թ.-ից հետո առաջին անգամ էր, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ միջնորդները վերջին տարածաշրջանային այցելության ընթացքում հատեցին շփման գիծը: Ամենից առաջ սա է կարեւորված ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ **Ռոբերտ Բրադկեի** (ԱՄՆ), **Բեռնար Ֆասիեի** (Ֆրանսիա) եւ **Իգոր Պոպովի** (Ռուսաստան) հայտարարության մեջ, որ երեկ տեղադրվել էր ԵԱՀԿ պաշտոնական կայքէջում, թեեւ թվագրված է սեպտեմբերի 9-ով, եւ որպես հայտարարության վայր նշված է Երեւանը:

Սեպտեմբերի 6-ից 9 տարածաշրջան կատարած այցելության ընթացքում համանախագահները եղան Բաքվում, Լեռնային Ղարաբաղում եւ Երեւանում, ընդ որում, համանախագահները հայտարարության մեջ չեն նշել Ստեփանակերտ այն նույն տրամաբանությամբ, ինչպես նշել են Երեւան եւ Բաքու, այլ միայն՝ Լեռնային Ղարաբաղ: Այդուհետեւ միայն, երբ ներկայացնում են Բաքվից Ղարաբաղ շփման գիծը, ոտքով հատել են բոլոր կողմերի թույլտվությամբ, որպես ուղղություն է նշվում «Ստեփանակերտ/Խանքենդի» տարբերակը: Այս ամենը ընդգծում է, որ «շփման գիծը հարեւան ժողովուրդների միջեւ մշտական պատնեշ դառնալու չէ», շեշտադրմամբ, որ 1994թ.-ի զինադադարը պետք է պահպանվի բոլոր կողմերի կողմից:


ՖՈՏՈԼՈՒՐ

Հայտարարությունը եւս մեկ անգամ հաստատում է, որ Ադրբեջանում, Հայաստանում եւ Լեռնային Ղարաբաղում այդ երկրների ղեկավարներին է ներկայացվել աշխատանքային այն պլանը, որի մասին արդեն իսկ հայտարարությամբ համանախագահները հանդես էին եկել դեռեւս սեպտեմբերի 6-ին:

«Ազգն» արդեն տեղեկացրել է, որ այդ պլանի համաձայն, սեպտեմբերի 13-18-ը համանախագահները կմեկնեն Վաշինգտոն, ապա Նյու Յորք՝ կողմերի հետ աշխատելու Միացյալ ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեայի շրջանակներում: Այդուհետեւ, սեպտեմբերի վերջից մինչեւ հոկտեմբերի կեսերն ընկած ժամանակահատվածում Մինսկի խմբի համանախագահները կվերադառնան տարածաշրջան՝ «Լեռնային Ղարաբաղի հարակից տարածքներում մարդասիրական իրավիճակի գնահատման դաշտային առաքելությունն իրականացնելու համար»:

«Բարձրակարգ խորհրդատուների եւ փորձագետների խումբը, որ կներառի նաեւ Միացյալ ազգերի կազմակերպության փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի ներկայացուցիչներին, առաքելության իրականացման ժամանակ կմիանա համանախագահներին», նշվում էր համանախագահների հայտարարության մեջ: Այս առաքելության իրականացումից հետո համանախագահները ծրագրում են արդյունքները ներկայացնել արդեն Վիեննայում՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ երկրների հանդիպմանը, որից հետո Մինսկի խմբի համանախագահներն իրենց տարեկան հաշվետվությունը կներկայացնեն ԵԱՀԿ մշտական խորհրդին՝ «կողմերի հետ ակտիվորեն նախապատրաստվելով Աստանայում կայանալիք ԵԱՀԿ գագաթաժողովին»:

Երեկ հրապարակված հայտարարությամբ արդեն համանախագահները ընդգծել են, որ «բոլոր կողմերի առավել կառուցողական մոտեցումն է անհրաժեշտ իրենց պլանն իրագործելու եւ մինչեւ ԵԱՀԿ գագաթաժողով ընկած ամիսների ընթացքում առաջընթաց գրանցելու համար»: Ինչ վերաբերում է Ղարաբաղի հարակից տարածքներ առաքելության իրականացմանը, ապա համանախագահներն այս առնչությամբ քննարկումներ են ունեցել բոլոր կողմերի հետ, ներկայացրել են առաքելության տարրերը, իսկ ընդհանուր առմամբ իրենց նախապատրաստական աշխատանքները համանախագահները կավարտեն «մոտ ապագայում»:

Համանախագահները բոլոր կողմերին խստորեն կոչ են արել պահպանել զինադադարը եւ զսպվածություն ցուցաբերել տեղերում եւ իրենց հանրային հայտարարություններում՝ շփման գծի երկայնքով ներխուժումներին-հարձակումներին վերջ տալու կոչով: «Չնայած բոլոր կողմերը վերահաստատել են իրենց պարտավորությունը 1994-ի զինադադարի առումով, համանախագահները կրկնում են, որ մեծապես կարեւոր է, որ այդ պարտավորությունը իրականացվի գործնականում», նշված է հայտարարության մեջ:

Միեւնույն ժամանակ, համանախագահները ողջունել են Ադրբեջանի որոշումը՝ հետաձգելու ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում իր ներկայացրած բանաձեւի քննարկումը: «Միաժամանակ, համանախագահները կրկնում են, որ ԵԱՀԿ Մինսկի խումբը մնում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման միակ ձեւաչափը», հայտարարել են համանախագահները:

Ինչպես ասում են, այս վերջին միտքը հասկապես դժվար հասկացողների համար է: Այս ընդգծումն էլ հուշում է, որ Ադրբեջանի՝ այլ ատյաններում հարցը քննարկման առարկա դարձնելու մոտեցումն արդեն բավականին հոգնեցրել է Մինսկի խմբի համանախագահներին, այլապես նման ընդգծում չէր լինի մի փաստաթղթում, որն ինքը վկայություն է, որ Մինսկի խումբը հակամարտության կարգավորման միակ ձեւաչափն է: Ավելին, Ադրբեջանի կողմից բանաձեւի քննարկման հետաձգումը մինչեւ մյուս նստաշրջան, ասել է թե՝ մեկ տարով, բնավ էլ սպառնալիք չէ Հայաստանի համար, քանի որ դժվար թե մեկ տարում որեւէ այլ ձեւաչափում ընթանա այն գործընթացը, որով հիմա փորձում են կարգավորել ղարաբաղյան հարցը:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՐԾԻՔՆԵՐ

# Ադրբեջանական դիվանագիտության հերթական ֆիասկոն

ՀՅԴ Հայ դատի գրասենյակի քաղաքական հարցերով պատասխանատու Կիրո Մանոյանի համար սպասելի էր, որ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում (ԳԱ) ադրբեջանական կողմը կհետաձգի հակահայ բանաձեւի ներկայացումը:

Նա դա կապում է ԵԱՀԿ ՄԽ համանախագահների կատարած վերջին հայտարարությանը: «Համանախագահների հայտարարության նպատակն էր թույլ չտալ Ադրբեջանին բանաձեւն անցկացնել ՄԱԿ-ի ԳԱ-ում, որովհետեւ դա կնշանակեր բանակցությունների տապալում: Առաջին անգամ չէ, երբ Ադրբեջանը նման քայլի է գնում, փորձում է շեղել գործընթացը եւ հարցը այնպիսի ատյաններ տանել, որտեղ ավելի մակերեսորեն կմոտենան խնդրին: Հայկական կողմի գլխավոր խնդիրն այն է, որ ՄԱԿ-ի ԳԱ երկրները հասկանան՝ սա այն հարցերից է, որի մասին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը որոշել է, որ աջակցում է ԵԱՀԿ-ի կողմից տարվող գործընթացին», ասաց **Կիրո Մանոյանը** **«Ազգ»**-ի հետ զրույցում:

Արմենական-Ռամկավար ազատական կուսակցության կենտրոնական վարչության անդամ **Սուրեն Սարգսյանի** մեկնաբանությամբ՝ Ադրբեջանը հրաժարվեց բանաձեւի ներկայացումից, որովհետեւ ՄԱԿ-ում հայկական ներկայացուցչությունը լավ աշխատեց: Նպաստեց նաեւ ԵԱՀԿ ՄԽ համանախագահների այցը Երեւան եւ Բաքու: «Բաքվում հասկացան, որ բանակցությունների ֆորմատի ձեւափոխումը բացասական ազդեցություն կունենա եւ վերաբերմունքն էլ Ադրբեջանի նկատմամբ կփոխվի»: Սարգսյանի մատուցմամբ՝ ընդամենը փոքրիկ դրական տեղաշարժ է եւ ոգեւորվելու անհրաժեշտություն չկա: Սարգսյանի հավաստմամբ հետագա աշխատանքում մեծ դերակատարություն պետք է ունենա լոբբինգը:

«Ժառանգություն» կուսակցության անդամ, ԱԺ պատգամավոր **Լարիսա Ալավերդյանն** էլ կարծում է, որ հայկական կողմը միշտ արձագանքողի դերում է: «Մենք միշտ պատասխանում ենք ադրբեջանական սադրանքներին եւ երբեք որեւէ հարցում նախաձեռնող չենք»: Նա հավելում է, որ ՄԱԿ-ում բանաձեւի հետաձգումը չի կարելի անվանել հաղթանակ: Հայկական կողմը ոչ ՄԱԿ-ում, ոչ էլ ԵԱՀԿ ՄԽ-ում իր փաթեթը չի ներկայացրել: «Միշտ մեկնաբանողի դիրքերից է խոսում Հայաստանը, սպասում է, որ Ադրբեջանում բանաձեւ ներկայացնեն, որպեսզի պատասխանի եւ քանի դեռ ԵԱՀԿ Մինսկի խմբի մադրիդյան անսկզբունքայնության դիրքն է պաշտպանում, ապա պետական դիվանագիտության նախաձեռնությունը պետք է գնահատել զրոյական»:

«Հայաստանի դիրքորոշումը արցախյան խնդրի շուրջը մեկն է. այն պետք է իրականացվի Մինսկի խմբի ձեւաչափով»: Սա էլ ՀՀԿ խմբակցության քարտուղար Էդուարդ Շարմազանովի տեսակետն է: Բանաձեւի հետաձգմամբ ադրբեջանական դիվանագիտությունը ֆիասկո ապրեց եւ հրապարակայնորեն արժանացավ ապտակի, որովհետեւ միջազգային հանրության համբերության բաժակը լցվել է:

**Շարմազանովը** շեշտում է, որ ՄԱԿ-ում ունենալով Իսլամական կոնֆերանսի երկրների հսկայական աջակցությունը, այնուամենայնիվ, Ադրբեջանը բանաձեւը դուրս հանեց, ինչը պարտություն է:

Հայկական կողմի դիրքորոշումն էլ չի փոխվել ու հայտնի է Ադրբեջանին. խաղաղ բանակցություններն այլընտրանք չունեն. ԼՂՀ-ն բանակցությունների կողմ է, եւ առանց ԼՂՀ ժողովրդի ցանկության եւ համաձայնության որեւէ մեկը չի կարող հարց լուծել:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀՀՇ-ն նահանջել է ազատական արժեքներից

ՀՀՇ նախկին նախագահ Ալիկ Արզումանյանին մտահոգում եւ ցավ է պատճառում այն փաստը, որ ՀՀՇ-ն կորցրել է իր արժեքներն ու գաղափարախոսություններն ու նահանջել ազատական արժեքներից: ՀՀՇ նահանջի դիրքերն ամենից ակնառու երեւացին մինչ ՀՀՇ համագումարն ու դրանից հետո տեղի ունեցած «չիստկաների» ու հրաժարականների ժամանակ:

«Մեր ընկերները հնչեցրել են կասկածներ համագումարի մասին, այդ փաստը եւ այն, որ նման պահանջներ են հնչել, անընդունելի են, որովհետեւ վերջին հաշվով, լինելով ՀՀՇ անդամ կարծել եմ, որ սա այն լիբերալ ուժն է, որը պետք է իր ներքին հարցերում առաջնորդվի ժողովրդավարական սկզբունքներով: Ցավում եմ, որ այսօր նահանջ է նկատվում», հայտարարեց **Ալեքսանդր Արզումանյանը** «Դուպլեքս» ակումբում: Նա համոզված է, որ ՀԱԿ-ում ազատական դաշտը պետք է ներկայացնի ՀՀՇ-ն: «Եթե կարողանա՝ ամեն ինչ նորմալ է, չի կարողանա՝ լուրջ խնդիր ունենք, եւ Հայաստանում բացակայում է ազատական-ժողովրդավարական հոսանքը»:

Այդուհանդերձ ՀԱԿ համակիր ՀՀՇ անդամ Արզումանյանն իր հույսը չի կորցրել՝ ՀՀՇ-ն կվերականգնի որդեգրած արժեքները:

«Հիմա ես ավելի սպասողական եւ հույսով եմ նայում, որ ՀՀՇ-ն նոր վարչությունով պետք է դառնա լոկոմոտիվը, որի հետեւից պետք է ազատական ուժերը գնան: Կոնգրեսում կան բոլոր ուժերը, եւ այսօր ամենապասիվը ազատականն է»:

Հ. Հ.

# Ադրբեջանին ստիպեցին շտկել իր ապակառուցողականությունը

*1-ին էջից*

Մինչդեռ Հայաստանի արտաքին գերատեսչությունից տեղեկացնում են, որ ԵԱՀԿ ՄԽ համանախագահների դաշտային առաքելությունը ԼՂ հարակից շրջաններ ոչ մի առնչություն չունի Ադրբեջանի կողմից ՄԱԿ-ի ԳԱ ներկայացված բանաձեւի նախագծին: «ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները սեպտեմբերի 6-ի հայտարարության մեջ նշեցին, որ ԼՂ հարակից շրջաններ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների դաշտային առաքելության մասին պայմանավորվածությունը ձեռք էր բերվել կողմերի միջեւ ամառվանից առաջ, այսինքն՝ Ադրբեջանի կողմից ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա բանաձեւի նախագծի ներկայացումից շաբաթներ առաջ», ասված է հայտարարության մեջ:

Հայաստանի ԱԳՆ-ն շնորհակալություն է հայտնել ՄԱԿ-ի անդամ բոլոր այն երկրներին եւ առաջին հերթին ԵԱՀԿ ՄԽ համանախագահ պետություններին, որոնք «իրենց դիրքորոշմամբ կանխեցին Ադրբեջանի փորձերը՝ շեղելու եւ վնաս հասցնելու ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման բանակցային գործընթացին՝ թույլ չտալով ՄԱԿ-ի ԳԱ-ում Ադրբեջանի ներկայացրած ապակառուցողական բանաձեւի ընդունումը»:

Ադրբեջանը, ըստ արտգործնախարարության հայտարարության, պետք է զերծ մնա Մինսկի խմբի շրջանակներում ընթացող կարգավորման գործընթացը այլ հարթակներ տեղափոխելու շարունակական փորձերից, «սադրիչ ու ռազմատենչ հայտարարություններից եւ գործողություններից, որպեսզի բանակցային գործընթացը առավել կառուցողական եւ արդյունավետ ընթացք ունենա»:

Ադրբեջանի նման քայլն, անկախ ամենից ինչից, նախ եւ առաջ ապացուցում է, որ Ադրբեջանում միայն մեծ-մեծ խոսում են, իսկ հարկ եղած դեպքում չեն կարողանում դիմակայել առնվազն ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների ճնշումներին: Այսինքն՝ ադրբեջանական կողմի հայտարարությունները, թե Մինսկի խումբն այլեւս անընդունելի է կամ սպառել է իրեն, իրական դիրքորոշում չեն, այնպես, ինչպես իրականությանը չեն համապատասխանում, ասենք, Ադրբեջանում տարբեր պաշտոնյաների հայտարարություններում նրանց վերագրվող ստերը:

Միեւնույն ժամանակ, թերեւս առաջին անգամ հստակորեն ի ցույց է դրվում, որ եթե ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները չեն ցանկանում այլեւայլ գործողությունների իրականացում տեսնել կամ հատնում է նրանց համբերությունը, ապա արդյունքը լինում է նման մի քայլ, երբ այդքան ջանք ու եռանդ ներդրած Ադրբեջանը այդ ջանքերի հիմնական առարկան ի պահ է տալիս արխիվներին առնվազն մեկ տարով:

Մյուս կողմից, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների դիրքորոշումը կարող է ներկայացուցչական լինել ՄԱԿ-ի անդամ մյուս երկրների համար, որպեսզի վերջիններս պատրաստակամությամբ չներքաշվեն այնպիսի հարցերի քննարկման ու քվեարկության մեջ, որոնցով զբաղվողներ կան, այն էլ ՄԱԿ-ի շրջանակներից դուրս: Թեեւ պետք է ընդունել, որ բանաձեւը օրակարգում թողնելու եւ քվեարկելու դեպքում ամենայն հավանականությամբ ընդունվելու էր, հստակ է, որ այդ քայլին Ադրբեջանը չգնաց իր իսկ ցանկությամբ, այլ հետաձգեց քննարկումը ստիպողաբար:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱւԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Ֆոբիաներ ունեցող մարդկանց թիվը միտում ունի ավելանալու: «Ֆոբիաներով մարդիկ սկսել են մեզ ավելի շատ դիմել», երեկ ասուլիսի ժամանակ ասաց «Այգ» հոգեբանական ծառայությունների կենտրոնի գլխավոր մասնագետ Ռուբեն Պողոսյանը: Ֆոբիան վախի որոշակի վիճակ է: Ի տարբերություն սովորական վախի՝ ֆոբիան չպատճառաբանված վախ է: **Ռուբեն Պողոսյանի** խոսքով՝ ֆոբիաներն առաջանում են որոշակի հոգեվիճակներում, օրինակ՝ դեպրեսիաների, սեւեռուն նեւրոզների ժամանակ: Ֆոբիաները նաեւ սոցիալական ծանր պայմանների հետեւանք են, որովհետեւ հաճախ մարդը ծանր հոգեկան վիճակի է հասնում հենց սոցիալական պայմանների պատճառով: Չպատճառաբանված վախերը խանգարում են մարդուն ու գցում նրա կյանքի որակը: «Ֆոբիաներ ունեցող մարդիկ չեն պահանջում զուտ հոգեբուժական միջամտություն: Նրանք ավելի շատ հոգեբանական ու հոգեվերլուծական միջամտության կարիք ունեն», «Արմատ» ակումբում նշեց Ռ. Պողոսյանը:

Սոցիալական աշխատանքի մասնագետ **Աննա Ոսկանյանի** փոխանցմամբ՝ հասարակության մեջ հիմնականում դրսեւորվում են 2 ձեւի վախեր, հատկապես խոցելի խմբերի մեջ, այսինքն՝ տարեց, հաշմանդամ, սոցիալապես անապահով մարդկանց, կանանց ու երեխաների շրջանում: Հիմնական վախերից մեկն այն է, որ մարդիկ վախենում են պլանավորել իրենց վաղվա օրը: Այսպիսի վախը կարող է տարածվել ընտանիքի բոլոր անդամների մեջ, աշխատանքային կոլեկտիվներում: «2-րդ հիմնական վախը ակտիվության վախն է: Մարդիկ խուսափում են իրենց դրսեւորելուց: Մենք վախենում ենք հաստատել մեր իրավունքները», ասաց Ա. Ոսկանյանը եւ բացատրեց, որ նման վախի ի հայտ գալը կապված է այն բոլոր անարդարությունների հետ, որոնք կատարվում են հասարակությունում: Սոցիալական աշխատանքում կա ձեռքբերովի անօգնականություն հասկացությունը, երբ մարդը համոզվում է, որ ինքնուրույն ոչինչ անել չի կարող, սա վախ է ինքնուրույնության հանդեպ:

Ռուբեն Պողոսյանը նշեց, որ քիչ չեն դեպքերը, երբ երիտասարդ տղաները ֆոբիաներ են ձեռք բերում բանակում ծառայելու ժամանակ: Հիմա բանակ գնում են ոչ թե հայրենիքին ծառայելու նպատակով, այլ պարտադրված, որովհետեւ ուրիշ ելք չեն գտնում: «Ծառայության գնալուց առաջ արդեն վախ կա բանակի հանդեպ, որ այնտեղ վատ է լինելու, հիվանդանալու են: Տղաները գնում են ծառայելու անվստահ», ասաց Ռ. Պողոսյանը:

Բանակում ստեղծված բարոյահոգեբանական ծանր պայմանների պատճառով բանակից երիտասարդները զորացրվում են ֆոբիաներով ու տարբեր հիվանդություններով, իսկ ամենացավալին ինքնասպանության դեպքերն են: «Պետք է շրջահայաց լինել ու լրջորեն զբաղվել բանակի խնդիրներով», հավելեց Ռ. Պողոսյանը: Բացի բանակում ծառայելու տարիներից, երիտասարդների մեջ ֆոբիաներ են առաջանում նաեւ քննական շրջաններում: Շատերը երկար տարիներ ապրում են ֆոբիաներով, սակայն համապատասխան մասնագետի չեն դիմում: Նրանք կարծես հարմարվում են իրենց վախերին, ու կպչուն մտքերին:

Բանախոսները նաեւ խոսեցին հոգեբանին եւ հոգեթերապեւտին դիմելու խնդիրների մասին: Չնայած մարդը գիտակցում է իր չպատճառաբանված վախերը, ամաչում դրանցից, նույնիսկ վախենում իր վախերից, բայց հոգեբանին դիմել չի ուզում, ավելի ճիշտ՝ ոչ թե չի ուզում, այլ ամաչում է: Փոխարենը՝ իր վախերով ու կպչուն գաղափարներով կիսվում է տան անդամների, ընկերների ու հարեւանների հետ, ինչն ըստ էության չի օգնում նրան: Ֆոբիաներով մարդիկ շատ անգամ իրենց «տարօրինակ» բողոքներով ու վախերով շրջապատում դառնում են անընդունելի: Հարկավոր է հնարավորինս շուտ դիմել հոգեբանի կամ հոգեթերապեւտի: «Նկատել եմ, որ կանանց օգնելն ավելի հեշտ է, քան տղամարդկանց: Այս հարցերում տղամարդիկ ավելի փակ են», ասաց Ա. Ոսկանյանը: Օրինակ՝ ամբողջ ընտանիքը գնում է բուժման, բացի հորից, որն ամենից շատ է զգում հոգեթերապեւտի կարիք: Մեկ այլ խնդիր է, որ մարդիկ չեն վստահում հոգեբաններին:«Մենք չունենք բավականաչափ լավ մասնագետներ, որոնց կարելի է վճարել», ավելացրեց Ա. Ոսկանյանը:

Ինչ վերաբերում է հոգեբանական ծառայությունների գներին, սոցիալական աշխատանքի մասնագետի խոսքով՝ այդ ծառայությունները հասանելի են ե՛ւ շատ աղքատներին, քանի որ կան նրանց օգնող հոգեբանական կենտրոններ, ե՛ւ հարուստներին: Խնդիրներ կարող են լինել միջին խավի համար, այնուամենայնիվ Աննա Ոսկանյանի համոզմունքը հետեւյալն է. «Կարեւոր է, որ մարդիկ մասնագետին դիմելու մշակույթ ունենան»:

# Հոգեբանին դիմելն ամենեւին էլ ամոթալի չէ



**ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

«ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ»

# Պատերազմի հարցում խոսքերն ավելի շատ են, քան ռազմական սպառնալիքը

**Հարավային Կովկասում Եվրամիության հատուկ ներկայացուցիչ Պիտեր Սեմնեբիի հայտարարությունը, թե շփման գծում հայ եւ ադրբեջանցի զինվորները գտնվում են դեմ առ դեմ, եւ ամեն վայրկյան սպասելի է, որ նյարդերը տեղի տալու պատճառով իրավիճակը դուրս գա հսկողությունից, ռազմական փորձագետ Դավիթ Ջամալյանը որակում է դիվանագիտական հայտարարություն: Միամտություն է կարծել, որ ադրբեջանական դիվերսիաներն ընդամենը առաջին գծում գտնվող զինվորների թույլ նյարդերի հետեւանք են: «Ստացվում է, որ ադրբեջանական բանակում կարգապահություն չկա՞, ով ինչ ուզում անո՞ւմ է: Սրանք հստակ կազմակերպված դիվերսիաներ էին», համոզված է Ջամալյանը:**

**Նա համոզված է, որ դիվերսիաները չեն կարող լայնածավալ ռազմական գործողությունների սկիզբ լինել. գերտերություններին, հատկապես Ռուսաստանին ավելի ձեռնտու է տարածաշրջանի վատ խաղաղությունը, քան պատերազմը: «Այս առումով քաղաքականությունն ավելի շատ է, քան ռազմական գործողությունների սպառնալիքը»: Սպառնալիքի փոքր լինելու փաստը չի նշանակում, որ առաջին գծում կրակոցներ չեն լինելու: Ջամալյանը համոզված է, որ վերջին շրջանում հայկական բանակում արձանագրված միջադեպերից ադրբեջանական կողմն օգտվել է, որպեսզի ավելի ակտիվացնի իր սադրանքները: Դրա լավագույն օրինակը հայ ռազմագերիների մասին տեսահոլովակի ցուցադրությունն էր, թե իբր հայ զինվորների համար Ադրբեջանում գերությունն ավելի գերադասելի է, քան հայրենի բանակում ծառայելը: Բայց Հայաստանն էլ այդ ամենից ճիշտ եզրահանգումներ արեց. Առաջին գծում զգոնության մակարդակը բարձրացել է. դիվերսիաներն այլեւս հաջողությամբ չեն ավարտվում:**

**«2005-ից սկսած հունիսի 18-ի դեպքը միակն է, երբ հայկական կողմը զոհ է տվել. իսկ դրանից հետո 2-3 օրվա ընթացքում ադրբեջանցիները 10 զոհ են տվել, ինչը հրադադարի պայմաններում լուրջ ցուցանիշ է»:**



# Հայ-բուլղարական համագործակցություն փոքր եւ միջին բիզնեսի ոլորտում

**Ըստ տրանսպորտի եւ կապի նախարարության մամուլի ծառայության հաղորդագրության՝ երեկ ավարտվեցին հայ-բուլղարական առեւտրատնտեսական եւ գիտատեխնիկական համագործակցության հանձնաժողովի 6-րդ նիստի աշխատանքները: Երկօրյա նիստի աշխատանքների արդյունքում միջկառավարական հանձնաժողովի հայկական կողմի նախագահ, տրանսպորտի եւ կապի նախարար Մանուկ Վարդանյանը եւ բուլղարական կողմի նախագահ, Բուլղարիայի Հանրապետության տրանսպորտի, տեղեկատվական տեխնոլոգիաների եւ կապի նախարար Ալեքսանդր Ցվետկովը ստորագրեցին նիստի արձանագրությունը, իսկ Հայաստանի փոքր եւ միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) զարգացման ազգային կենտրոն հիմնադրամի ու Բուլղարիայի ՓՄՁ զարգացման գործակալության միջեւ ստորագրվեց փոքր եւ միջին ձեռնարկատիրության բնագավառում համագործակցության հուշագիր:**

**Ա. Ս.**

# Պատարագին չմասնակցելու Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի որոշումը շոկի է ներգործություն է ունեցել Վանում

*1-ին էջից*

Սակայն թուրքական իշխանությունների սեպտեմբերի սկզբին արած հայտարարությունը, թե տեխնիկական պատճառներով անհնար է մինչեւ ժամերգություն եկեղեցու խաչի տեղադրումը, գերազանցեց բոլոր ենթադրությունները:

Թուրքական իշխանություններին հակազդեցությամբ առաջինը արձագանքեց Մայր աթոռը՝ չեղյալ համարելով պատարագին մասնակցելու նախնական որոշումը: Մայր աթոռի օրինակին հետեւեց նաեւ Երուսաղեմի պատրիարքարանը, թեեւ մինչ այդ Կ. Պոլսո հայոց պատրիարքի տեղապահ Արամ արք. Աթեշյանը գերմանական Deutsche Welle-ի թուրքական ծառայության հարցին պատասխանելիս, ասել էր, որ սահմանադրական փոփոխությունների հետ կապված հանրաքվեն թույլ չի տալիս տեղադրել Սուրբ Խաչ եկեղեցու խաչը, բայց եւ այնպես, սեպտեմբերի 19-ին պատարագի օրը խաչը շքամուտքի մոտ սեղանի վրա կցուցադրվի:

Վան այցելությունը բոյկոտելու Մայր աթոռի որոշումից հետո էլ պատրիարքարանի հոգեւոր խորհուրդը, ինչպես սեպտեմբերի 8-ին վկայել է «Հաբերթուրքը», հանդես եկավ հայտարարությամբ. «Թուրքական պետությունը չի հրաժարվում տեղադրումից: Ընդամենը ասում է, որ տեխնիկական պատճառներով անհնար է խաչի տեղադրումը մինչեւ պատարագ, որովհետեւ տեղադրման որոշումն Անկարան անցյալ շաբաթ է հաստատել: Ուստիեւ, կարճ ժամանակահատվածում հնարավոր չէ շինարարական լաստակներ տեղադրել եկեղեցում ու վերամբարձ կռունկ բերել Աղթամար կղզի: Պատարագից հետո սկզբնավորվելու է խաչի տեղադրման գործընթացը: Չենք հասկանում, թե ինչպես կարելի է չար կամքով արձագանքել բարի կամքի այս դրսեւորմանը: Մինչ այդ ասում էին, որ եկեղեցին փակ է ժամերգության համար: Վերջապես բացվեց: Հիմա էլ պատճառ են բռնում, թե խաչ չունի: Ո՞րն է այս մոտեցման նպատակը: Խաղող ուտե՞լը, թե՞ այգեպանին ծեծելը», բայց՝ ապարդյուն:

Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու պատարագին, բացի Պոլսո հայոց պատրիարքարանից, մայրապետական ոչ մի աթոռ չի մասնակցելու: Մինչդեռ թուրքական կողմը ակնկալում էր, որ Մայր աթոռի եւ Երուսաղեմի պատրիարքարանի ներկայացուցիչների հետ Հայաստանից եւ Սփյուռքից Վան կժամանեն շուրջ 5 հազար հայեր:

Թուրքական մամուլը, ելնելով բոյկոտի փաստից, Աղթամարի Սուրբ Խաչում նախատեսվող պատարագի կառավարական նախաձեռնությունը համարում է ձախողում: Այդ ընթացքում, ինչպես սեպտեմբերի 9-ի համարում նշում է «Ռեֆերանս» թերթը, Վանի նահանգապետարանը Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի որոշմանն ի պատասխան, հայտարարում է. «Եկեղեցու խաչը չի տեղադրվում ոչ թե միտումնավոր, այլ՝ տեխնիկական դժվարությունների պատճառով, քանի որ անհնար է մինչեւ սեպտեմբերի 19 վերամբարձ կռունկ բերել կղզի՝ 200 կիլոգրամանոց խաչը տեղադրելու համար»:

Այդ հայտարարությունից հետո Վանի հյուրանոցներում բրոնյա արված 250 տեղ չեղյալ է հայտարարում, իսկ դա շոկի ներգործություն է ունենում Վան քաղաքի գործարարների վրա: Այս ամենը ստիպում է Վանի առեւտրաարդյունաբերական պալատին նախաձեռնություն հանդես բերել: Այսպիսով, պալատը որոշում է սեփական ուժերով լուծել Սուրբ Խաչ եկեղեցու խաչի տեղադրման հարցը:

Այդ մասին, նույն «Ռեֆերանսի» վկայությամբ, հայտարարել է պալատի նախագահ **Զահիր Քանդաշօղլուն**, ասելով. «Մեր գլխավոր նպատակը Հայաստանի քաղաքացիների հետ հարաբերություններ հաստատելն է եւ դրանք զարգացնելը: Ուզում ենք, որ պահպանվի հաշտեցման եւ երկխոսության այս մթնոլորտը: Այդ իսկ պատճառով խաչի տեղադրմանը ձեռնամուխ ենք լինում մենք՝ Վանի գործարարներս: Խոսք ենք տալիս եւ մեր խոսքի տերն ենք: Այն խաչը, որի տեղադրումը տեխնիկական պատճառներով անհնար է համարում նահանգապետարանը, ճախարակներով ինքներս կտեղադրենք: Երկուշաբթի օրը խաչը կտանենք կղզի եւ ճախարակների օգնությամբ կբարձրացնենք եկեղեցու գմբեթ: Ես երաշխավորում եմ մեր հայ հյուրերին: Եկեք թույլ չտանք, որ այս կարգի բացասական հայտարարությունները մթագնեն այսպիսի կարեւոր իրադարձությունը: Ներկա պահին Վանի հյուրանոցներում բրոնյա է արված մոտ 3 հազար տեղ: Սակայն խաչի տեղադրմանն առնչվող բացասական հայտարարությունների պատճառով մի քանի օրվա մեջ այս տեղերից 250-ը չեղյալ համարվեց»:

Ի տարբերություն Վանի առեւտրաարդյունաբերական պալատի նախագահ Քանդաշօղլուի, Թուրք-հայ գործարար միության փոխնախագահ **Նոյան Սոյաքը** խաչի տեղադրման հետաձգումը պայմանավորել է սեպտեմբերի հանրաքվեով, ապա եւ ավելացրել. «Թեեւ ժամերգությանը մասնակցելու առնչությամբ Հայաստանից արված բացասական հայտարարությունները քննարկվում են ամերիկահայերի շրջանում, սակայն լուրջ աջակցություն չեն գտնում: Սեպտեմբերի 19-ին Սուրբ Խաչում նախատեսվող ժամերգությունը խորհրդանշական է: Դրանով հանդերձ, ժամերգությանը մասնակցելու համար միայն ԱՄՆ-ի արեւելյան նահանգներից Թուրքիա էին ժամանելու 500 հայեր»:

**Հ. ՉԱՔՐՅԱՆ**

## Գնահատում

# Չթուլացող եռանդով

Լրացավ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, Մաշտոցի անվան Մատենադարանի բազմաշխատ եւ վաստակավոր գիտնականներից **Հրավարդ Հրաչյայի Հակոբյանի** ծննդյան 80-ամյակը: Այս ութսուն տարիներից շուրջ հինգուկես տասնյակը կապված է հայ արվեստի եւ հայագիտության հետ:

Ծնվել է 1930 թվականի սեպտեմբերի 13-ին Էջմիածին քաղաքում: 1949 թ. ավարտելով Հոկտեմբերյան քաղաքի (այժմ՝ Արմավիր) թիվ 1 միջնակարգ դպրոցը, 1949-1952 թթ. սովորել է Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարանի քանդակագործության բաժնում, 1953-1958 թթ.՝ Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում: Շնորհիվ ուսումնառության այս երկու միմյանց հաջորդող շրջաններին, ինչպես գրում է արվեստագիտության դոկտոր **Վիգեն Ղազարյանը**, «Նա ձեռք է բերել արվեստագետի համար կարեւոր երկու հմտություն՝ նկարչի աչք եւ աղբյուրագետի պրպտող միտք»:

Մատենադարանի երջանկահիշատակ տնօրեն Լեւոն Խաչիկյանի հրավերով 1959 թ. գալիս է հայ ձեռագրային աշխարհի խոշորագույն այս օջախը եւ իր հետագա ողջ կյանքը կապում Մատենադարանի հետ:

1968թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Վասպուրականի մանրանկարչական դպրոցի սկզբնավորումը եւ Աղթամարի XIV-XV դդ. նկարիչները» թեմայով, ստանալով արվեստագիտության դոկտորի աստիճան:

1985թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Վասպուրականի մանրանկարչությունը (XII-XVդդ.)» թեմայով եւ ստացել արվեստագիտության դոկտորի գիտական աստիճան:

1989թ. համատեղության կարգով հրավիրվում է նաեւ Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան, նախ որպես ամբիոնի վարիչ, ապա 2000 թվականից՝ ամբիոնի պրոֆեսոր:

Անցնող այդ տասնամյակները Հ. Հակոբյանի կյանքում նշանավորվել են գիտամանկավարժական եւ հասարակական հարուստ եւ արդյունաշատ գործունեությամբ: Նա հեղինակ է շուրջ երկու տասնյակ աշխատությունների: Գիտնականի հետազոտությունների շրջանակում առանձնակի տեղ է գրավում Վասպուրականի արվեստը, որին է նվիրված նրա երկհատոր «Վասպուրականի մանրանկարչությունը» (հտ. Ա, Երեւան, 1976թ., հտ. Բ, 1982թ.) գործը, ինչպես նաեւ «Հայկական մանրանկարչություն» շարքի Վասպուրականին նվիրված մեծադիր ալբոմը (Երեւան, 1978թ.), որը 1989թ. հրատարակվեց նաեւ ռուսերեն: Անհրաժեշտ է նշել, որ Հ. Հակոբյանի համահեղինակցությամբ են լույս տեսել նաեւ «Հայկական մանրանկարչություն» (Լենինգրադ, 1984թ.) անգլերեն եւ «Հայկական մանրանկարչություն» (Երեւան, 1987թ.) ռուսերեն ալբոմները:

Վասպուրականի մանրանկարչությանը նվիրված իր ուսումնասիրությամբ Հ. Հակոբյանը վեր հանեց Հայոց պատմական այս մեծ նահանգի տարբեր գավառներում գտնվող վանական գրչօջախների մանրանկարչական արվեստի մեջ եղած ընդհանրություններն ու տարբերությունները:

Գիտական հետազոտություններն ազգային հիմնախնդիրների պաշտպանությանը ծառայեցնելու բնորոշ օրինակ է գիտնականի «Արցախ-Ուտիքի մանրանկարչությունը» (Երեւան, 1989թ.) ուսումնասիրությունը, որին 1991թ. հաջորդեց «Արցախի միջնադարյան արվեստը» գործը:

Ընդլայնելով Արցախի արվեստի ուսումնասիրության շրջանակը եւ գիտության միջոցով Արցախի դատին իր մասնակցությունը բերելու նպատակադրմամբ 1993թ. նա Բեռլինում Գերմանիայի Ավետարանական եկեղեցու նախագահ Մանֆրեդ Ռիխտերի աջակցությամբ հրատարակում է «Լեռնային Ղարաբաղի (Արցախ) պայքարը, պատմությունը, մշակույթը, արվեստը» հիմնարար հատորը՝ աշխատակցությամբ եվրոպացի հայագետ հեղինակավոր գիտնականների: Այս գրքում համակողմանիորեն ներկայացված է ոչ միայն Արցախի արվեստը, այլեւ արցախյան հիմնախնդիրը:

Այս գործի համար 1996թ. Հ. Հակոբյանն արժանանում է ԼՂՀ Եղիշեի անվան մրցանակին:

Առանձին մի խումբ են կազմում հոբելյարի՝ արվեստի պատմությանը եւ տեսությանը նվիրված այն գործերը, որոնք գրված են արվեստագիտության դասավանդման եւ ուսուցման մեթոդիկայի տեսանկյունից:

Այս շարքի առաջին աշխատանքն էր «Կերպարվեստը հայոց կրթարաններում» (Երեւան, 1996թ.) ուսումնասիրությունը, որը եկավ լրացնելու հայ կերպարվեստի ուսուցման պատմության, դրվածքի ու մեթոդական եղանակների մասին մեզանում եղած բացը:

Ուսումնական նույն թելադրանքով են գրված նաեւ «Ձեռագիր մատյանների պատկերազարդման արվեստը Վասպուրականում» (Երեւան, 1997թ.), «Հայ արվեստի աշխարհում» (Երեւան, 1998թ.), «Համաշխարհային եւ հայ արվեստի պատմության ուղեցույց» (1-ին հրատարակությունը՝ Երեւան, 1999թ., երկրորդը՝ 2005թ.) աշխատանքները:

Գիտական հետազոտությունների հաջորդ ուղղությունը, որով զբաղվում է Հ.



Հակոբյանը, հայ գաղթավայրերի արվեստն է: Բազմաթիվ ուսումնասիրություններ են գրվել Իտալիայի հայ համայնքի մասին: Իտալահայ համայնքի պատմությունը նա դիտարկում է Իտալիայում հայ արվեստի պատմության տեսանկյունից «Հայերը եւ Իտալիան» գրքում, որը ունեցել է երկու հրատարակություն (Երեւան, 1999թ., եւ 2005թ.):

Նույն այս շրջանակում Ավո Հովհաննիսյանի հետ համատեղ հրատարակել է «Նոր Ջուղայի խոջայական ապարանքների գեղարվեստական հարդարանքները 17-18-րդ դդ. (Երեւան, 2007թ.) ուսումնասիրությունը, ուր Նոր Ջուղայի որմնանկարչական արվեստը դիտարկվում է նոր շրջանի արեւմտաեվրոպական ու արեւելյան ավանդական զարդարվեստի հետ տարված զուգահեռներում, ինչպես նաեւ կարեւոր անդրադարձ է կատարում այն հարցին, թե Հին Ջուղայի, եւ ընդհանրապես Նախիջեւան աշխարհի մշակութային ավանդներն ինչպես շարունակվեցին Նոր Ջուղայում:

Հայոց եկեղեցում պատկերների պաշտամունքի հարցին է նվիրված «Հայոց Տերունական սրբապատկերները» (Երեւան, 2003թ.) հիմնարար աշխատությունը: Մեր եկեղեցին պատկերապաշտության եւ պատկերամարտության նշանավոր վեճերի շրջանում միջանկյալ դիրք է գրավել, որը հայտնի է «պատկերահարգություն» անվամբ, ըստ որի, պաշտվել է ոչ թե պատկերը (իկոնան), այլ նրա պարունակած հոգեւոր խորհուրդը: Ահա այս պատճառով Հայոց եկեղեցին դասական իմաստով սրբապատկերներ չունի: Հ. Հակոբյանը սակայն, մատենագրական աղբյուրների նրբին քննությամբ ցույց է տալիս, թե սրբապատկերը որպես հոգեւոր ծիսապաշտամունքային երեւույթ, ինչ արտահայտություններ է ունեցել Հայոց եկեղեցում՝ այս շրջագծում քննելով նաեւ թե՛ տարբեր սրբանկարներ եւ թե՛ ժողովրդային պաշտամունքի առարկա դարձած ձեռագիր Ավետարանների Տերունական պատկերները եւ մետաղյա կազմերը:

2009թ. Հր. Հակոբյանն իր անվանի գործընկերներ Արարատ Աղասյանի, Մուրադ Հասրաթյանի եւ Վիգեն Ղազարյանի համահեղինակցությամբ հրատարակեց «Հայ արվեստի պատմության» իրապես կապիտալ հատորը, ուր ներկայացվում եւ լուսաբանվում է հայ կերպարվեստի եւ ճարտարապետության անցած պատմական ուղին հնագույն ժամանակներից մինչեւ մեր օրերը: «Զանգակ-97» հրատարակչության լույս ընծայած այս գործին, որն աննախադեպ է թե՛ նյութի ընդգրկմամբ եւ թե՛ զետեղված նկարների թվով եւ բարձրարվեստ տպագրությամբ ու ձեւավորմամբ, արժանիորեն շնորհվեց ՀՀ պետական մրցանակ:

Հ. Հակոբյանը մի քանի գիտական հաստատությունների եւ գիտական խորհուրդների ու գիտական կոչումներ շնորհող հանձնաժողովների անդամ է: Իր ղեկավարությամբ բազմաթիվ երիտասարդ արվեստագետներ, պաշտպանելով իրենց թեկնածուական ատենախոսությունները, իրենց անձնագիրն են ստացել գիտության աշխարհում:

Ի գնահատություն գիտահասարակական այս գործունեության, Հրավարդ Հակոբյանը 2003թ. արժանացել է Հայաստանի Հանրապետության նախագահի շնորհակալագրին, իսկ 2005 թվականին՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Պատվոգրին եւ ապա՝ ՀՀ նախագահի հրամանագրով՝ ՀՀ գիտության վաստակավոր գործչի կոչման, իսկ 2006 թվականին՝ ՀՀ նախագահի շնորհակալագրին: Նա նաեւ ՀՀ մշակույթի նախարարության, Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի եւ Արցախի պետական համալսարանների ոսկե մեդալակիր է:

Այսօր եւս Հ. Հակոբյանն աշխատում է նույն եռանդով՝ մեկը մյուսի հետեւից ամբողջացնելով իր նոր ուսումնասիրությունները: Երբ լրացել էր նրա 75-ամյակը, լույս տեսավ իր «Կենսամատենագիտությունը», ուր ներկայացված են գիտնականի կյանքի անցած ճանապարհը, տպագիր աշխատությունները եւ դրանց առիթով հրատարակված գրախոսականները: Ինչպես այն ժամանակ ինքն ասաց կատակելով, թե այս «Կենսամատենագիտությունը» եթե լույս տեսներ մի երկու ամիս ուշ, ապա եւս երկու գիրք կնշվեր տպագիր աշխատանքների ցանկում, որոնք իսկապես լույս տեսան հաջորդող ամիսներին:

Նման ձեւով այժմ՝ Հ. Հակոբյանի ութսունամյակի լրանալու այս օրերին, տպագրության ընթացքում է Վ. Ղազարյանի հետ համահեղինակցությամբ պատրաստված «Հայ միջնադարյան արվեստ» մեծադիր հատորը, որն ընդգրկում է նկարչության, քանդակագործության, դեկորատիվ եւ կիրառական արվեստները: Շուտով, Էսմա Ավետիսյանի համահեղինակցությամբ, Հրավարդ Հակոբյանը տպագրության կհանձնի հաեւ «Հայկական ժողովրդական արվեստի եւ Հովհաննես Շարամբերյանի անվան կենտրոնի պատմությունից» գործը, ուր համակողմանիորեն քննվում են նաեւ ժողովրդական արվեստ հասկացությունը եւ վերջինիս ընդգրկման ոլորտները հայկական միջավայրում:

Այժմ նաեւ գրության փուլում է «Նոր շրջանի հայ արվեստի կազմավորման ընթացքը. 17-19-րդ դարեր» ուսումնասիրությունը, որը ներառում է թե՛ հայկական բնաշխարհը եւ թե՛ հայ գաղթավայրերը: Ուստի մաղթենք, որ անցնող ամիսներն ու տարիները այսուհետեւ եւս նորանոր գործերով հավելեն նրա աշխատությունների ցանկը, եւ Հրավարդ Հակոբյանը, շարունակելով նույն նվիրումով աշխատել, ոչ միայն իր հարուստ գիտաստեղծագործական փորձը փոխանցի իր կրտսեր գործընկերներին, այլեւ նրանց համար շարունակի մնալ գիտնականի եւ հասարակական մտահոգություններով ապրող մտավորականի կենդանի օրինակ:

**ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ**
**Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի ավագ գիտաշխատող**

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

# Նամակ Գերմանիայից

**Հայաստանի Հանրապետության նախագահ՝ պարոն Սերժ Սարգսյանին**
**Մեծարգո պարոն նախագահ,**

**Ձեր ԳԴՀ կատարած առաջին պաշտոնական այցը կարեւոր դեր ունեցավ հայ- գերմանական կապերի հետագա ամրապնդման համար: Միեւնույն ժամանակ այն մեծ իրադարձություն էր նաեւ գերմանահայ համայնքի կյանքում: Ձեր հանդիպումը համայնքի ներկայացուցիչների հետ եւ անկեղծ խոսակցությունը, որը տեղի ունեցավ քննարկման ընթացքում, շատ օգտակար էր մեզ համար: Ուրախություն ապրեցի, երբ տեղեկացա, որ Դուք Ձեզ հետ բերել եք Գերմանիայի հայկական դպրոցների համար դասագրքեր եւ այլ անհրաժեշտ գրականություն: Ցանկանում եմ նշել նաեւ Բեռլինում ՀՀ դեսպանության արդյունավետ աշխատանքը, որի արդյունքում դասագրքերը ժամանակին առաքվեցին ԳԴՀ տարբեր երկրամասերի հայկական կրթօջախներին: Ցանկալի կլինի, որ հետագայում, բացի ավանդական դասագրքերից, դպրոցները ապահովվեն նաեւ ժամանակակից ինֆորմացիոն տեխնոլոգիաների հիման վրա մշակված արդիական ուսումնական նյութերով: Հուսով ենք, որ հետագայում նույնպես Հայաստանի կառավարությունը կապահովի ոչ միայն գրքերի հրատարակումը, այլեւ կաջակցի դրանց առաքմանը դեպի համայնքներ:**

**Տարբեր երկրներից ԳԴՀ արտագաղթած հայ ընտանիքների եւ հատկապես երեխաների համար հայկական մեկօրյա դպրոցների գործունեությունը այն կարեւորագույն գործոնն է, որը թույլ է տալիս պահպանել մեր մատաղ սերնդի հայկական ինքնությունը: Հաղթահարելով բազմաթիվ եւ տարաբնույթ դժվարություններ՝ ԳԴՀ փոքրաթիվ հայկական համայնքները հիմնադրում եւ պահպանում են այս կրթօջախները, որոնք հնարավորություն են ստեղծում պահպանելու հայոց լեզուն եւ հայ ոգին, պահելու կապը հայրենիքի հետ:**

**Հարգելի պարոն նախագահ,**

**Սփյուռքում ապրող յուրաքանչյուր հայ միշտ ուշադրության կարիք եւ սպասելիք ունի հայրենիքից: Գրքերի առաքումը ԳԴՀ, Ձեր նախաձեռնությամբ եւ Ձեր անմիջական մասնակցությամբ, խանդավառություն առաջացրեց Մայնցի հայ համայնքի երեխաների, ինչպես նաեւ նրանց ծնողների շրջանում: Ստանալով գրքերը, մենք բոլորս մեկ անգամ եւս համոզվեցինք, որ Հայաստան-պետությունը հոգ է տանում մեր մասին: Բոլորս բարձր ենք գնահատում Ձեր հոգատար վերաբերմունքը եւ հայտնում ենք մեր երախտագիտությունը:**

**Լավագույն մաղթանքներով՝**

**ԿԱՐԻՆԵ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**
**Մայնցի հայկական դպրոցի կազմակերպիչ**

# Լոսանջելեսցի փոքրիկ հայ աղջիկը մրցանակներ է ստանում



**Իննամյա Անահիտ Սարգսյանը**, որի ընտանիքը Երեւանից 2006-ին է տեղափոխվել Լոս Անջելես, Los Veliz-ի տարրական դպրոցում արդեն երկու անգամ մրցանակ է ստացել, 2009-ին՝ առաջին, 2010-ին՝ երկրորդ: Առաջին մրցանակը «Հարավային Կալիֆոռնիայում ամենակարեւորն ընթերցանությունն է» էջանշանի մրցույթում հաղթելու համար է. երեխաներին առաջարկվել է գունազարդել եւ մակագրել էջանշանները: Անահիտի աշխատանքն ամենալավն է համարվել: Մրցույթն անցկացվում է մի ծրագրի շրջանակում, որը նպատակ ունի բարելավելու գրագիտության մակարդակը Կալիֆոռնիայում եւ երեխաների համար բացահայտելու հաճույքի համար կարդալու կախարդանքը: Մրցույթի շրջանակում ամեն տարի Կալիֆոռնիայում 210 հազարից ավելի գիրք է անվճար բաժանվում, որպեսզի երեխաների ու նրանց ծնողների համար հիմնվեն տնային գրադարաններ: Էջանշանները վաճառվում են, դրանց գումարից գոյացած միջոցները գնում են կարիքավոր երեխաների համար տնային գրադարաններ հիմնելուն: Իսկ այս տարի արդեն նույն մրցույթը մի փոքր այլ երանգ ուներ՝ մրցույթին մասնակցող երեխաներին առաջարկվել է տեքստ-մեկնաբանություն գրել էջանշանում պատկերվածի մասին: Ընտրված երեք լավագույն աշխատանքներից մեկն էլի Անահիտինն է եղել, որը ստացել է երկրորդ մրցանակ: Այս մասին նաեւ գրել է «Լոս Անջելես թայմսն» իր այս տարվա մայիսի 30-ի համարում, նշելով, որ տարրական դասարանների երեխաների գրած մեկնաբանություն-շարադրություններից ընտրված երեք լավագույնների մեջ է նաեւ Անահիտ Սարգսյանինը, որը մյուս երկուսի հետ տպագրվել է թերթում: Անահիտի շարադրությունը մի աղջկա մասին է, որը փորձում է փրկել ինչ-որ մեկի կյանքը:

**Անահիտը հաճախում է նաեւ կիրակնօրյա հայկական դպրոց, ինչպես նաեւ հայկական պարի դպրոց:**

**Ինչո՞ւ կարեւորեցինք այս փոքրիկ պատմությունը, որը մեծ տեղեկատվություն չի պարունակում. նախ՝ հարգեցինք Լոս Անջելեսից «Ազգի» մշտական ընթերցողի՝ Լիանա Երիցյանի խնդրանքը, հրապարակելով նրա նամակն իր թոռնիկի մասին, եւ երկրորդ, ներկայացրինք փաստորեն մի փոքրիկ պատառիկ Լոս Անջելեսի հայերի առօրյայից: Իսկ հայերն ամենուր նույնն են՝ սիրում են պատմել իրենց երեխաների հաջողությունների մասին:**

**Ս. Խ.**

# Եվս մի «դինոզավր»

Vesti.az-ի «զրուցակիցն» այս անգամ ՌԴ Պետդումայի պատգամավոր, սահմանադրական օրենսդրության եւ պետական շինարարության հարցերով կոմիտեի փոխնախագահ **Վիկտոր Իլյուխինն** է:

Բայց դրանից ոչինչ չի փոխվում. ռուս խորհրդարանականը նույնպես, ինչպես Վիկտոր Միշինը կամ գեներալ Սաֆրոնովը, հանդես է գալիս որպես «ազերպրոպի» քարոզիչ:

Իհարկե, ամեն ոք ազատ է՝ կանգնելու հակամարտության կողմերից մեկի կողքին, պաշտպանելու նրա մոտեցումները: Բայց երբ նախկին «օսոբիստը» եւ ներկայիս խորհրդարանականը պարզապես փաստերն է աղավաղում, նենգափոխում իրադարձությունների ընթացքը, ավելին, երբ նա անպատասխանատու հայտարարություններ է անում՝ պնդելով, որ Թելման Գդլյանի «ուզբեկական փողերը կռվել են Լեռնային Ղարաբաղում», մարդ սկսում է կասկածել նրա բանականությանը կամ բարոյականությանը:

Հակառակ դեպքում նա չէր ասի, որ Սումգայիթի դեպքերի ժամանակ «Սիլվա Կապուտիկյանը եւ Զորի Բալայանը գտնվել են ԱՄՆ-ում, որտեղ, ըստ երեւույթին, հանձնարարականներ էին ստացել»:

Բացահայտ սուտ: Այդ օրերին Սիլվա Կապուտիկյանը եւ Զորի Բալայանը Երեւանում էին: Իսկ մինչ այդ նրանք եղել էին Մոսկվայում, ԽՄԿԿ ԿԿ գլխավոր քարտուղար Միխայիլ Գորբաչովի մոտ: Եվ նրա խնդրանքով է, որ երկու հայտնի մտավորականները Երեւանում հորդորել էին դադարեցնել գործադուլը եւ հանրահավաքը: Ադրբեջանը, մինչդեռ, պատասխանեց Սումգայիթի ցեղասպանությամբ:

Իլյուխինը կրկնում է «ազերպրոպի վարկածը». իբր Հայաստանից «հազարավոր ադրբեջանցիներ էին արտաքսվել, որ հիմնականում կենտրոնացել էին Ապշերոնյան թերակղզում»,- նրանք էլ, ահա, պատճառ դարձան, որ «Սումգայիթում անկարգություններ լինեն»:

Դարձյալ սուտ: Ադրբեջանական քիչ թե շատ անկանխակալ աղբյուրներն անգամ վկայում են, օրինակ՝ Զարդուշտ Ալիզադեն՝ «Երկրորդ հանրապետության վախճանը» գրքում, որ ոչ մի հազարավոր փախստական էլ Հայաստանից Ադրբեջան չի բռնագաղթել: Գործել է մարդկանց մի խումբ՝ Ադր. ԿԿ Ապշերոնի շրջկոմի առաջին քարտուղարի հովանու տակ, որը նախ փորձել է անկարգություններ եւ հայ բնակչության ջարդեր հրահրել Բաքվում, ապա, հանդիպելով Բաքվի կուսքաղկոմի առաջին քարտուղար Ֆուադ Մուսաեւի վճռական դիմադրությանը, տեղափոխվել է Սումգայիթ:

Իսկ ջարդարարներին առաջնորդել է Սումգայիթի կուսքաղկոմի առաջին քարտուղար Ջահանգիր Մուսլիմզադեն, «մահ հայերին» կարգախոսը հնչեցրել է բանաստեղծի համարում ունեցած Խըդըր Ալոեւը, որը հետագայում Հեյդար Ալիեւի հովանավորությամբ ընտրվել է Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր:

Ռուս խորհրդարանականը խառնում է ամեն ինչ: Նա նույնացնում է «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին եւ Մուհամմեդ Խաթեմիին ու Նեյմաթ Փանահովին: Տպավորություն է ստեղծվում, թե նրանք բոլորը ԽՍՀՄ դատախազության կողմից ձերբակալվել են միաժամանակ, նույն մեղադրանքով:

Իրականությունն այն է, մինչդեռ, որ «Ղարաբաղ» կոմիտեի անդամները ձերբակալվել են 1988 թ., իսկ Խաթեմին եւ Փանահովը՝ 1990 թ.: Առաջիններին ներկայացվել է քաղաքական մեղադրանք: Երկրորդները մեղադրվել են Բաքվում զանգվածային անկարգություններ կազմակերպելու, խորհրդային զորքերին զինված դիմադրություն ցույց տալու մեջ: Տարբերությունն, ինչպես պարզ երեւում է, ահռելի է:

Ի դեպ, նա հիշում է, որ Բաքվի կենտրոնական հրապարակի ցույցը ցրելուց հետո քննչական խումբն առգրավել էր մեծ գումար, որն, իբր, ինքը «բաժանել է փախստականներին»:

Ի՞նչ իմանաս, գուցե չի՞ բաժանել: Գուցե ադրբեջանական լրատվամիջոցը նրա դեմ «կոմպրոմատ» ունի՞: Եվ գուցե այդ «երեսուն արծաթը» չհիշեցնելու դիմա՞ց է Իլյուխինը ստանձնել Ադրբեջանի դատապաշտպանի դերը:

Կամ, ուզում ենք հավատալ, Վիկտոր Իլյուխինը Vesti.az-ի հարցազրույցին որեւէ առնչություն չունի: «Ազերպրոպը», բացառված չէ, թխել է հերթական կեղծիքը եւ այն «կնքել» ՌԴ Պետդումայի անդամի անունով:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

# Պուտինը փորձում է կանխել Nabucco-ն



**Դեպի Եվրոպա գազամուղների կառուցման հարցում դիմակայություն է ծագել Գերմանիայի նախկին արտգործնախարար Յոշկա Ֆիշերի եւ ՌԴ վարչապետ Վլադիմիր Պուտինի միջեւ: Գերմանական Handelsblatt թերթը գրում է, որ Ֆիշերը մերձկասպյան տարածաշրջանի գազը Եվրոպա հասցնելու Nabucco նախագծի կողմնակիցն է, իսկ Պուտինը փորձում է կանխել այդ գազամուղի կառուցումը:**

**Պուտինը ծրագրում է անցկացնել «Հարավային հոսք» մրցակից գազամուղը, որով սիբիրյան գազը պետք է հասցվի Եվրոպա: Սոչիում օտարերկրացի փորձագետների լսարանի առջեւ ելույթ ունենալով՝ Պուտինն ասել է, որ Nabucco-ն դեռ չունի երաշխավորված մատակարարներ:**

**Ֆիշերը իր հերթին Handelsblatt-ին տված հարցազրույցում հայտարարել է. «Ռուսաստանի կառավարությունը պարտավոր է իր տնտեսական շահերը մաքրել քաղաքական նկրտումներից»: Նա վստահ է, որ խոսքը ոչ միայն գազի, այլեւ տարածաշրջանում Ռուսաստանի իշխանության մասին է:**

**Պուտինի կարծիքով, Nabucco-ն գազի արտահանման հարցում կվնասի Մոսկվային: Nabucco-ի շինարարությունը ձգձգվում է: Ծրագրի համաձայն՝ գազամուղը 2015-ին գործարկելու համար անհրաժեշտ են պայմանագրեր մատակարարների հետ: Թերթի տվյալներով, ռուսները խոչընդոտներ են հարուցում, «ճնշում գործադրում հավանական մատակարար Թուրքմենստանի վրա եւ գազի հանքավայրեր ձեռք բերում Ադրբեջանում», թեեւ Ռուսաստանն ինքը ունի աշխարհում գազի խոշորագույն պաշարները (բոլոր պաշարների 1/4-ը):**

**Կենտրոնական Ասիայի գազային ռեսուրսների համար մղվող մրցավազքում կարեւոր է Ադրբեջանի դերը, ասվում է հոդվածում: Նախատեսվում է այստեղից ստանալ Nabucco-ի ամենամյա 31 մլրդ խմ արտահանության մոտ 1/3-ը: Ադրբեջանն ուզում է Արեւմուտքում գտնել գործընկերներ եւ ներդնողներ, որպեսզի նվազեցնի կախումը Մոսկվայից: Բայց Nabucco-ն Ադրբեջանի համար միակ տարբերակը չէ. Nabucco կոնսորցիումի մրցակիցն է համարվում Gaz de France ընկերությունը:**

**Nabucco-ի համար գազի որոնումը «մարտավարական դժվար խաղ է», բայց Ֆիշերը համոզված է, որ երկրորդ կիսամյակում բանակցությունները հաջողությամբ կավարտվեն: Պուտինը իր հերթին վկայակոչում է տարածաշրջանի երկրների սահմանների անորոշությունը, ինչը, բնականաբար, խոչընդոտում է գազամուղի կառուցմանը:**

# Ահմադինեժադը կայցելի Լիբանան եւ Իսրայելի սահման

**Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը հոկտեմբերի 13-ին պաշտոնական այցով կմեկնի Լիբանան, հաղորդում է L´Orient Le Jour թերթը:**

**Երկօրյա այցի շրջանակներում Ահմադինեժադը հանդիպումներ կունենա Լիբանանի նախագահ Միշել Սուլեյմանի, վարչապետ Սաադ Հարիրիի եւ «Հզբոլլահ» արմատական կազմակերպության ղեկավարության ներկայացուցիչների հետ: Ինչ վերաբերում է «Հզբոլլահի» առաջնորդ Հասան Նասրալլահին, նրա հետ Ահմադինեժադը հանդիպել է այս տարվա փետրվարին:**

**Այցելության ծրագրի մեջ մտնում է նաեւ «էքսկուրսիա» դեպի լիբանանա-իսրայելական սահման:**

**Թերթի տեղեկությունների համաձայն, Ահմադինեժադը մտադիր է կրկնել Լիբանանում Իրանի դեսպան Գազանֆար Աբադիի միջոցով ավելի վաղ արված առաջարկությունը Լիբանանի բանակը զինելու իրանցիների պատրաստակամության վերաբերյալ:**

**Օգոստոսի կեսերին ԱՄՆ վարչակազմի ներկայացուցիչ Ֆրեդերիկ Հոֆը Բեյրութ կատարած այցելության ժամանակ Լիբանանի բանակի գլխավոր շտաբի պետ Ժան Կահվաջիին հորդորել էր հրաժարվել իրանցիների ռազմական օգնությունից: Ավելի ուշ ամերիկացիները նույնիսկ փորձեցին ճնշում գործադրել Ֆրանսիայի վրա, որպեսզի վերջինս Լիբանանին չվաճառի «Գազել» ուղղաթիռների համար նախատեսված HOT հրթիռներ: Պատճառաբանությունն այն է, թե հրթիռները կարող են հայտնվել «Հզբոլլահի» ձեռքին եւ օգտագործվել Իսրայելի դեմ: Սակայն Ֆրանսիան մտադիր չէ հրաժարվել զինավաճառքի գործարքից: Այդ մասին «Ազգը» գրել է օգոստոսի 31-ի համարում:**

# Անկախ Հնդկաստանի առաջին կաստայական մարդահամարը՝ 2011-ին

Գաղութային ժամանակաշրջանից հետո առաջին անգամ Հնդկաստանում 2011-ին անցկացվելու է կաստայական մարդահամար: Դրա անցկացմանը սեպտեմբերի 9-ին հավանություն է տվել երկրի կառավարությունը, հաղորդում է BBC-ն:

Նախատեսվում է կաստայական մարդահամարի անցկացումը սկսել 2011-ի հունիս-սեպտեմբերին՝ այն բանից հետո, երբ կավարտվի բնակչության վերաբերյալ տեղեկությունների հավաքումը 2010-ին սկսված ընդհանուր մարդահամարի շրջանակներում: Ըստ որում, կաստայական պատկանելության վերաբերյալ տեղեկության տրամադրումը պարտադիր չի լինելու:

Հնդկաստանի բնակչությունն ավանդաբար բաժանվել է կաստաների՝ ըստ մարդկանց ծագման եւ զբաղմունքի: Կաստայական համակարգը պաշտոնապես չեղյալ է հայտարարվել 1950 թվականին: Կաստաների վերացումը ամրագրված է Հնդկաստանի սահմանադրության մեջ:

Սակայն երկրի շատ տարածաշրջաններում ստորին կաստաների անդամներին մինչեւ օրս արգելում են այցելել ուրիշ կաստաների անդամների տներ եւ շփվել նրանց հետ: Ֆրանսպրեսի տվյալներով, հնդիկ քաղաքական գործիչների զգալի մասը դեմ է կաստայական մարդահամարի անցկացմանը, քանի որ, նրանց կարծիքով, նման արշավը կնպաստի հասարակության մեջ խտրականության ամրապնդմանը:

Բնակչության կաստայական պատկանելության բացահայտմանն ուղղված վերջին մարդահամարը Հնդկաստանում անցկացվել էր 1931-ին, երբ երկիրը մտնում էր Բրիտանական կայսրության մեջ: Ֆրանսպրեսը նշում է, որ դրանից հետո կաստայական մարդահամարներ չեն անցկացվել, թեեւ սովորական մարդահամարների հարցերի մեջ պարբերաբար ընդգրկվել են կաստայական պատկանելությանը վերաբերող կետեր:

# Աֆղանստանում ամերիկացիները սպանել եւ անդամահատել են խաղաղ բնակիչների

**Համաշխարհային մամուլի ուշադրության կենտրոնում ամերիկացի զինծառայողների հետ կապված հերթական սկանդալն է: Խոսքն այս անգամ ոչ թե իրաքյան «Աբու Ղրեյբ» բանտի եւ խաղաղ իրաքցիների սպանությունների, այլ Աֆղանստանի մասին է:**

**ԱՄՆ բանակի հրապարակած փաստաթղթերի համաձայն, Աֆղանստանում ամերիկացի զինվորները սպանել են խաղաղ բնակիչների եւ անդամահատել նրանց մարմինները՝ որպես ռազմավար պահելով սպանված մարդկանց ատամները եւ ոսկորները: Այդ մասին հաղորդում է BBC գործակալությունը:**

**Բանակային փաստաթղթերը վկայում են, որ այս տարվա հունվարին, փետրվարին եւ մայիսին 5 զինվորներ կատարել են մի քանի դաժան սպանություն: 7 ուրիշ զինծառայողներ մեղադրվում են հանցակցության եւ ծառայակիցների ոճիրները թաքցնելու մեջ: Բոլոր կասկածյալները «Ստրայկեր» 5-րդ բանակային բրիգադի զինծառայողներ են: Բրիգադն Աֆղանստանում է անցյալ տարվանից եւ Ղանդահարի նահանգում մասնակցել է ծանր մարտերի:**

**Փաստաթղթերի համաձայն, ավագ սերժանտ Կելվին Գիբսը, կապրալ Ջերեմի Մոռլոկը, առաջին կարգի շարքային Էնդրյու Հոլմսը, մասնագետներ Մայքլ Ուեգնոնը եւ Ադամ Ուինֆիլդը մեղադրվում են երեք խաղաղ աֆղանների սպանության մեջ, որոնց վրա նախ նռնակներ են նետել, ապա գնդակահարել են:**

**Մյուս զինվորները մեղադրվում են աֆղանների մարմինները անդամահատելու, դա լուսանկարելու կամ զոհերի լուսանկարները պահելու համար: Կասկածներ կան, որ նրանք ծեծել են ուրիշ մարդկանց, որպեսզի թույլ չտան շփվել քննիչների հետ:**

# Չերչիլը մեղադրվում է հնդիկների սովամահության համար



Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Ուինսթոն Չերչիլը մեղադրվում է 2-րդ աշխարհամարտի տարիներին Հնդկաստանում միլիոնավոր մարդկանց սովամահության համար: «Դեյլի թելեգրաֆ» թերթը գրում է, որ այս մեղադրանքներն առաջ են քաշվում հնդկական ծագումով ամերիկյան գրող Մադհուսրի Մուքերջիի նոր՝ «Չերչիլի գաղտնի պատերազմը» գրքում:

Հեղինակը նշում է, որ երբ Ճապոնիան գրավեց Բիրման, Հնդկաստանին բիրմայական բրնձի մատակարարումները դադարեցվեցին: Իսկ Հնդկաստանի արեւմուտքում՝ բրնձի դաշտերում սկսվեց ջուտի մշակություն, որից պարկեր էին պատրաստում:

Չերչիլը հրաժարվեց հնդիկ սովյալներին օգնություն հասցնել, վկայակոչելով ազատ նավերի բացակայությունը: Հեղինակի տվյալներով, Կալկաթայում եւ Արեւմտյան Բենգալիայի նահանգում սովից մահացավ ավելի քան մեկ միլիոն մարդ:

Մուքերջին հրապարակում է նաեւ նոր փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս, որ հենց այդ ժամանակ բրիտանական նավերը Ավստրալիայից կանոնավորապես ձավարեղեն են տեղափոխել Միջերկրածովի երկրներ, որտեղ պարենի պակաս չկար: Ավելին, նավերի երթուղիներն անցնում էին Հնդկաստանի մոտերքով:

Չերչիլը բազմիցս անտեսել է Հնդկաստանին պարեն հասցնելու Ավստրալիայի եւ ԱՄՆ-ի կոչերը՝ նույնիսկ այն ժամանակ, երբ ամերիկացիներն առաջարկեցին օգտագործել իրենց նավերը:

Մինչ Կալկաթայի բնակիչները սովից մահանում էին, բրիտանական վարչակազմի ներկայացուցիչները ճաշկերույթներ էին կազմակերպում քաղաքի ռեստորաններում: Հեղինակը Չերչիլի դիրքորոշումը բացատրում է նրա ռասիստական համոզմունքներով:

# Հոգեւոր ներդաշնակության եւ սիրո արգասիք.

## «Սպեղանի» երգչախմբի պետերբուրգյան հաջողությունը

Նուրբ-զգայական հուզաշխարհ, արտիստիկ խառնվածք, խորքից հորդող իմպուլսիվ խոսք՝ վարակիչ ու հաղորդական. այսպիսին էր իմ զգացողությունը **Սարինա Ավթանդիլյանի** հետ զրույցից հետո, երբ նա հուզված եւ նույնքան ոգեշնչված պատմում էր իր ղեկավարած «Սպեղանի» երգչախմբի պետերբուրգյան փառատոնի փայլուն մասնակցության մասին: Երգարվեստին անմոռաց նվիրումը, ջերմեռանդությունն ու հավատը նրա կերպարը առանձնացնում են մշակութային տիրող ընդհանրություններից եւ դասում լավագույնների շարքին:

... «Սակավ են ծնվում այնպիսի կենսական երաժշտական խմբեր, ինչպիսին «Սպեղանին» է: Այն բարձրացավ Ղարաբաղյան պատերազմի կրակներից՝ պատմության բարձրակետում, միավորեց տառապողների ու կորուստ ունեցողների ձայները, եւ դրա մեջ մեծ իմաստ կար: Պատերազմները կավարտվեն, իսկ նահատակների մասին հիշողությունը կմնա: Սարինա Ավթանդիլյանի այս միտքը այժմ դարձել է հոգեւոր ժառանգություն, հայ ժողովրդի պատմության մի մասնիկը: Ամեն ինչ հիասքանչ է այս երգչախմբում՝ և՛ երգիչները, և՛ խմբավարի ոգեւորող վարպետությունը» (Մարգարիտա Ռուխկյան, արվեստագիտության դոկտոր):



Երգչախումբը հաստատապես իր դերն ու տեղն ունի Հայաստանի խմբերգային արվեստում՝ իր երկացանկում ընդգրկված տարբեր դարաշրջանների ու ազգերի ստեղծագործությունների ընտրանիով եւ դրանց ինքնատիպ, անկրկնելի մեկնաբանություններով: Երգչախմբի կատարմամբ վերջերս ձայնագրված Կոմիտասի մշակմամբ Սուրբ Պատարագը ՝ քահանայի եւ սարկավագի երգամասերով, արժանացավ Գարեգին Երկրորդ կաթողիկոսի օրհնությանը եւ արվեստաբանների բարձր գնահատանքին:

Արտերկրի (Լիբանան, Իտալիա, Շվեյցարիա, Գերմանիա, Ռուսաստան) միջազգային բազմաթիվ համերգային շրջագայությունները, փառատոների մասնակցությունը երգչախմբին բերեցին համբավ եւ դափնիներ, լայն ճանաչում համաշխարհային երաժշտական հասարակայնության շրջանում:

Երգչախումբը վերջերս է վերադարձել Պետերբուրգում կայացած Յուրի Ֆալիկի անվան խմբերգային արվեստի միջազգային հեղինակավոր մրցույթ-փառատոնից եւ վերադարձել է փայլուն հաջողությամբ՝ արժանանալով փառատոնի Առաջին մրցանակին՝ «Հոգեւոր երաժշտություն» եւ «Ազգային երաժշտություն» անվանակարգերում, իսկ «Ժամանակակից երաժշտություն» անվանակարգում՝ ժյուրիի սահմանած հատուկ մրցանակին՝ «Մրցույթի պարտադիր ստեղծագործության լավագույն կատարման համար»:

Բարձր գնահատանքի արժանացավ նաեւ երգչախմբի բեմական հագուստը՝ կարված «Լիլիթ» նորաձեւության տանը, դիզայներ Լիլիթ Մարգարյանի մտահղացմամբ: Այդ զգեստը, ասես, գտնված էր հենց «Սպեղանիի» համար, որը վստահություն, թեթեւություն ու քնարականություն է հաղորդում՝ մեղմ-հանդարտ երանգների ընտրությամբ, զգեստի վերնամասում, կաշվի վրա՝ հայկական զարդամոտիվներով: Դա լավագույն լուծումն էր՝ արդիականի, դասականի եւ ազգայինի նրբաճաշակ համադրության: Բեմահարթակում երգչախումբը ներկայացավ այնպիսի գեղեցկությամբ, որով իսկապես կարելի է հպարտանալ:

Պետերբուրգյան թարմ տպավորություններով երգչախումբը օրեր առաջ շատ գեղեցիկ համերգ ունեցավ Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը՝ Կանադայի խորհրդարանական խմբի պատվիրակության՝ Հայաստան կատարած այցի առիթով: Հայաստանում Կանադայի հյուպատոսության ուշադրությունից չէր վրիպել երգչախմբի պետերբուրգյան հաջողությունը եւ ցանկություն էր հայտնել ունկնդրելու նրանց: «Սպեղանիի» կատարումների մաքրությունը, մեղեդայնությունը, ձայնի հնչեղ, նուրբ տարածությունը, թատրայնացված կատարումների յուրաձեւերը՝ շարժումների նրբագեղությամբ, վերջապես արտաքին տեսքը, հագուստը ամբողջական էին դարձնում նրանց բեմական կերպարը՝ ներդաշն գեղեցկության մթնոլորտ ստեղծելով դահլիճում: Դա քնարական, եթերային-ոգեղեն մի վիճակ էր, որ պարգեւեցին նրանք հանդիսատեսին: Համերգային բոլոր կատարումները գեղեցիկ էին, բայց հատկապես տպավորիչ էին Ջուլիո Կաչչինիի «Ավե Մարիան» եւ Սերգեյ Եկիմովի մշակմամբ «Ты река ль моя, реченька» ռուսական ժողովրդական երգը, որի հնչողության մեջ զարմանալի պահպանված էր ռուսական ոգին:

Այժմ վերադառնանք պետերբուրգյան փառատոնին «Սպեղանիի» մասնակցության օրերին եւ վերհիշենք այն՝ գեղարվեստական ղեկավար եւ դիրիժոր Սարինա Ավթանդիլյանի վարակիչ ու ներշնչված խոսքերով:

Ռուսական փառահեղ քաղաքի նույնքան հրաշագեղ բեմերից երգչախմբի կատարմամբ հնչեցին հայ, ռուս եւ արտասահմանյան կոմպոզիտորների լավագույն ստեղծագործություններ: «Սպեղանին» ելույթներ ունեցավ քաղաքի գլխավոր համերգասրահներում՝ Սանկտ Պետերբուրգի կոնսերվատորիայի, Պետական կապելլայի, Սուրբ Պողոս-Պետրոս Մայր տաճարում:

*«Դա բոլորովին այլ մթնոլորտ էր: Մեծ պատիվ է այդպիսի դահլիճներում ելույթ ունենալ, միաժամանակ՝ շատ պատասխանատու: Փառատոնի մասնակից բոլոր խմբերը հրաշալի էին:*

*Ամեն անգամ բեմ բարձրանալիս, մենք զգում էինք դահլիճի ջերմությունը, որը մեզ ներշնչում էր, ոգեւորում: Դահլիճն ուղղակի թնդում էր ծափերից: Իրոք, անհնար է փոխանցել հայ խմբերգային արվեստի հանդեպ պետերբուրգյան հանդիսատեսի ընդունելության ջերմությունը: Արժե նշել նաեւ, որ Սանկտ Պետերբուրգի կոմպոզիտորների ստեղծագործություններին նվիրված հատուկ համերգը սկսվեց մեր երգչախմբի ելույթով: Կատարումներից տպավորված՝ դահլիճում նստած մի շարք կոմպոզիտորներ որոշում կայացրին իրենց հաջորդ ստեղծագործությունը նվիրել «Սպեղանիին»*, պատմում է Ս. Ավթանդիլյանը:

Իսկ փառատոնի գեղարվեստական տնօրեն **Սերգեյ Եկիմովը**, արտահայտելով իր հիացմունքը, ասել է. «Մեզ *համար փառատոնի առանձնահատուկ բացահայտումը «Սպեղանի» եկեղեցական երգչախումբն էր, մանավանդ նրա կատարմամբ Կոմիտասի ստեղծագործությունները: Իսկ Պետերբուրգում ոչ հաճախ եւ գուցե առհասարակ չես լսի Կոմիտաս: Այնքան խորն է այդ երաժշտությունը, որ անմիջապես կլանում է ունկնդրի հոգին: Միեւնույն ժամանակ զարմացրեց երգչախմբի բարձրարվեստ, կատարյալ մեկնաբանումը՝ ռուսական խմբերգերի: Իսկ մրցույթի արդյունքները մեզ պարզապես ապշեցրին»*:

Երգչախումբը շրջապատված էր Սանկտ Պետերբուրգի Հայոց եկեղեցու հոգեւոր հայրերի ուշադրությամբ եւ ջերմությամբ: Սանկտ Պետերբուրգի «Ազգերի տանը» կայացավ «Սպեղանիի» համերգը՝ նվիրված տեղի հայ համայնքի կազմավորման 300-ամյակին: Երգչախմբի գեղարվեստական ղեկավար Սարինա Ավթանդիլյանը ոգեշունչ շնորհավորական ուղղեց ներկաներին, ուր մասնավորապես այսպիսի խոսքեր կային. *«Աշխարհում գեղեցկագույններից մեկը համարվող այս հրաշագեղ քաղաքում, որն իրավամբ համարվում է ռուսական ճարտարապետության եւ, ընդհանրապես, ռուսական պատմության ու մշակույթի մարգարիտը, դարերի միջով մեզ է երկարում նաեւ հայ-ռուսական առնչությունների խոր արմատներ: Սանկտ Պետերբուրգն այն քաղաքն է, որը Պետրոս Մեծի կոնդակով հիմնադրման օրվանից դեպի իրեն է ձգել մեծ թվով հայերի: Սա նշանակում է, որ իբրեւ աշխատասեր ու ստեղծագործ ժողովուրդ՝ մենք ցանկալի ենք եղել նոր դարաշրջան բացող ռուս ժողովրդին եւ, փառք Աստծո, այսօր էլ ակտիվորեն մասնակցում ենք այս հրաշալի քաղաքի հասարակական-քաղաքական, մշակութային, գիտական ու ուսումնական կյանքին»*:

«Սպեղանիի» պետերբուրգյան փառատոնի մասնակցությունն իրականացավ մասնավորապես տեղի հայ համայնքի նախագահ **Կարեն Մկրտչյանի** անմիջական աջակցության շնորհիվ, որը նաեւ հետաքրքրական անակնկալ մատուցեց մրցույթի տպավորիչ արդյունքներից հետո՝ կազմակերպելով հրաշալի ուղեւորություն Նեւա գետով:

... Եվ իհարկե՝ ռուսական հին մայրաքաղաքի ճարտարապետության ցնցող տպավորություն. *«Պետերգոֆը» շատրվանների մայրաքաղաք է, դա ջրի եւ ոսկու, մարմարի ու բրոնզի, դարավոր ծառերի, որ տնկել էր ինքը՝ Պետրոս Մեծը, զարմանահրաշ համադրություն է: Եվ Էրմիտա՞ժը՝ ռուսական վիթխարի թանգարան՝ ազգային մշակույթի խորհրդանիշը, ճարտարապետական սքանչելի կոթողների համաձուլում, որտեղ պահպանվում են տարբեր քաղաքակրթություններ ներկայացնող արվեստի գլուխգործոցներ»*:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

**Հ. Գ. 2011-ին լրանում է «Սպեղանի» երգչախմբի հիմնադրման 15-ամյակը: Մաղթենք, որ Սանկտ Պետերբուրգի փայլուն հաջողությունը, որը երգչախմբի հերթական ձեռքբերումներից մեկն է, համեստ նախորդը լինի նրանց հետագա նվաճումների:**



# Մեկնարկեց «Ռեանիմանիա» երկրորդ միջազգային կինոփառատոնը

**«Ռեանիմանիա» Երեւանի միջազգային անիմացիոն կինոփառատոնը ստեղծվել է 2008-ին՝ նպատակ ունենալով աջակցել հայկական անիմացիայի երբեմնի համբավի վերականգնմանը: 2009-ին փառատոնը հաջող մեկնարկ ունեցավ: Ոգեւորված հաջողություններով՝ 2010-ին փառատոնը հանդես եկավ մի շարք նոր նախաձեռնություններով՝ ՄարԱնի՝ անիմացիայի շուկա, «Տաղանդների որս» մրցույթ, «Հայկական ներկապնակ» ծրագիր, բացօթյա ցուցադրություններ՝ նպատակ ունենալով համաշխարհային ճանաչում ունեցող անիմացիոն ֆիլմերն ավելի մոտ դարձնել հայ հանդիսատեսին, ինչպես նաեւ փառատոնին նոր որակ հաղորդել:**



**Երեկ «Մոսկվա» կինոթատրոնում հանդիսավորությամբ ազդարարվեց փառատոնի մեկնարկը: Իսկ մինչ այդ արդեն «Նաիրի» կինոթատրոնում սկսվել էր կարճամետրաժ մրցութային ֆիլմերի ցուցադրությունը, ինչպես նաեւ ԳԱԿ-ի Փոքր թատրոնում Մուհամեդ Ղազալան ներկայացրեց աֆրիկյան անիմացիայի պատմությունը:**

**Անիմացիայի ուրախ ու ջերմ տրամադրությունը ջազի ուրախ հնչյունների ներքո թեւածում էր Երեւանի «Ազնավուրի» հրապարակում: Հանդիսավոր կարմիր գորգով անցան հեղինակավոր հյուրերը, փառատոնի աջակիցները, հանդիսատեսները...**

**Իսկ ահա կինոդահլիճը, որտեղ ներկայացուցչական հատվածից հետո պետք է սկսվեր Սիլվեն Շոմեի «Աճպարարը» ֆիլմը, ծայրեծայր լցվել էր մարդկանցով... Մթնոլորտն ավելի շիկացավ, երբ բեմում հայտնվեց Վրեժ Քասունին՝ աճպարարի թիկնոցով, եւ փորձեց հնարքներ ներկայացնել՝ որպես նախերգանք «Ռեանիմանիայի» առաջին պրեմիերայի՝ «Աճպարարի»:** Ս. ՄԱԿԱՐՅԱՆ

# Շեքսպիրյան փառատոնը՝ սեպտեմբերի 15-24-ը

**Երեւանում կմեկնարկի Վահրամ Փափազյանի անվան շեքսպիրյան միջազգային թատերական փառատոն: Փառատոնի կայացմանը աջակցում են ՀՀ մշակույթի նախարարությունն ու Հայաստանի թատերական գործիչների միությունը: Այս տարի փառատոնը նվիրվում է հայ մեծ թատերագետ, ակադեմիկոս, ՀՀ ԳԱ արվեստի ինստիտուտի եւ Շեքսպիրյան կենտրոնի հիմնադիր Ռուբեն Զարյանի ծննդյան 100-ամյակին: Փառատոնի շնորհիվ վերականգնվում են հայ թատրոնի շեքսպիրյան ավանդույթները՝ ինչի վկայությունն են հայկական յոթ նոր բեմադրությունները՝ որոնք ընդգրկված են փառատոնի ծրագրում:**

**Շեքսպիրյան փառատոնը շարունակում է կարեւորել ժամանակակից խոշորագույն թատերական դեմքերի մասնակցությունը: Հետեւելով այդ սկզբունքին՝ փառատոնը այս տարի Երեւան է հրավիրել մեր ժամանակների խոշորագույն բեմադրիչ Փիթեր Բրուքի «WARUM, WARUM» ներկայացումը (Ցյուրիխի դրամատիկական թատրոն):** Ս. Մ.

# ԱՄՆ դեսպանությունը սեպտեմբերի 11-15-ը ներկայացնում է «Բրազավիլ» ինդի փոփ խմբին

**ԱՄՆ դեսպանությունն ամերիկյան բազմազան մշակույթի հարուստ ներկապնակից ս.թ. սեպտեմբերից 11-15-ը սիրով հայ հանդիսատեսին է ներկայացնում ինդի փոփ ժանրը ներկայացնող «Բրազավիլ» խմբին: Հայաստանյան ծրագրով խումբը եզրափակում է իր միջազգային հյուրախաղերը Կենտրոնական Ասիայում եւ Կովկասում:**

**«Բրազավիլ» խումբը ձեւավորվեց 1997 թ. Դեյվիդ Արթուր Բրաունի (վոկալ, կիթառ) կողմից: Խմբի մյուս անդամներն են՝ Մեթյու Ռեյնոլդս Դե Մերիթ (շեփոր, ստեղնային գործիքներ), Իվան Նայթ (հարվածային գործիք), Քեննի Լայեն (կիթառ), Դեյվիդ Ռեյլիք (սաքսոֆոն, թրոմբոն): «Բրազավիլը» թողարկել է ինն ալբոմ, որոնք մեծ հնչեղություն են ստացել: Դրանց շարքում են «Դեռահասի ամառային օրերը» եւ «Արեւելյան Լոս Անջելեսի զեփյուռը» ալբոմները, որոնք ռուսական հիթ շքերթների ամենապատվավոր տեղերում հայտնվեցին՝ դրանցում ներառված էր «Կինո» խմբի «Արեւ անունով աստղը» երգի անգլերեն տարբերակը: Իսկ խմբի կենդանի կատարումներով «Բրազավիլը Ստամբուլում» ալբոմը տեղ գտավ Եվրոպայի համաշխարհային ալբոմների լավագույն քսանյակում: Խմբի մասին հրապարակումներ են եղել «Լոս Անջելես թայմս»-ում, «Նյու Յորքեր»-ում, «Աֆիշա»-ում եւ այլ հրատարակություններում: Խումբը հանդես է եկել աշխարհի տարբեր երկրներում, ընդ որում տոմսերը մշտապես սպառվել են համերգներից շատ առաջ: Խմբի երաժշտարվեստի վրա իր ազդեցությունն է ունեցել Լոս Անջելեսի բազմամշակութային ու բազմազգ միջավայրը: Անշուշտ ազդեցություն է ունեցել նաեւ խմբի միջազգային փորձը: «Բրազավիլը» հետամուտ է այն պարզունակ գաղափարին, որ աշխարհը մի գեղատեսիլ վայր է՝ լեցուն բազում հրաշալիքներով, եւ մշակութային փոխանակումները կարող են վերացնել առկա պատնեշները:**

**«Բրազավիլը» Երեւանում ելույթ կունենա սեպտեմբերի 12-ին, ժամը 20-ին Սիրահարների այգում, հասցեն՝ Բաղրամյան 21: Սեպտեմբերի 13-ին խումբը կլինի Գյումրիում ու նույն օրը ժամը 19-ին համերգով հանդես կգա տեղի դրամատիկական թատրոնի շենքում: Խումբը նաեւ հանդես կգա երաժշտական դպրոցի սաների համար Հրազդան քաղաքում եւ կանցկացնի վարպետության դասեր Երեւանում: Բոլոր միջոցառումներին մուտքն ազատ է:**

# Արոնյանն իր վարկանիշով 4-րդն է աշխարհում




ՖԻԴԵ-ն հրապարակել է շախմատիստների դասակարգման հերթական ցուցակը: 100 ուժեղագույն շախմատիստների ցանկը կրկին գլխավորում է նորվեգացի Մագնուս Կառլսենը (2826): Հաջորդ տեղերում են բուլղարացի Վեսելին Թոփալովը (2803) եւ հնդիկ Վիշվանաթան Անանդը (2800): 4-րդ հորիզոնականը զբաղեցնում է Լեւոն Արոնյանը (2783): Թեեւ հուլիսի դասակարգման ցուցակի համեմատ Լեւոնն իր վարկանիշը պահպանել է, սակայն մեկ տեղով առաջադիմել է` շրջանցելով ներկայումս 5-րդ տեղում գտնվող ռուսաստանցի Վլադիմիր Կրամնիկին (2780): Վերջինս վարկանիշը 10-ով նվազեցրել է: 6-րդ հորիզոնական է տեղափոխվել ուկրաինացի Պավել Էլյանովը (2761): Լավագույն տասնյակում են նաեւ ռուսաստանցի Ալեքսանդր Գրիշչուկը (2760), ադրբեջանցի Շահրիյար Մամեդյարովը (2756), ուկրաինացի Վասիլի Իվանչուկը (2754) եւ Իսրայելը ներկայացնող Բորիս Գելֆանդը (2751):

Բացի Արոնյանից, 100 ուժեղագույնների շարքում ընդգրկված են եւս 3 շախմատիստներ: Սլովակիայում բնակվող Սերգեյ Մովսիսյանը 2723 վարկանիշով 23-րդն է: Նա պահպանել է իր ցուցանիշը: Վարկանիշը (2691) պահպանել է նաեւ Վլադիմիր Հակոբյանը` մեկ հորիզոնականով բարձրանալով 43-րդ տեղը: Գաբրիել Սարգսյանը վարկանիշն (2677) ավելացրել է 4-ով, սակայն 61-րդ տեղից նահանջել է 62-րդ հորիզոնական:

Կանանց վարկանիշային ցուցակի անփոփոխ առաջատարը Հուդիթ Պոլգարն է (2682): 2600-ի սահմանագծին մոտ է հնդիկ շախմատիստուհի Համփի Կոներուն (2593): Լավագույն տասնյակում են նաեւ Հոու Յիֆանը (2578), Տասյանա Կոսինցեւան (2573), Նադեժդա Կոսինցեւան (2565), Անտոանետա Ստեֆանովան (2551), Կատերինա Լահնոն (2539), Աննա Մուզիչուկը (2535), Նանա Ձագնիձեն (2534) եւ Ալեքսանդրա Կոստենյուկը (2524):

100 ուժեղագույն շախմատիստուհիների ցանկում Հայաստանի 3 ներկայացուցիչ է ընդգրկված: Լիլիթ Մկրտչյանը 16-ով ավելացրել է վարկանիշը (2484) եւ նախկին 30-րդ տեղից տեղափոխվել է 21-րդ հորիզոնական: Առաջընթաց է ունեցել նաեւ Էլինա Դանիելյանը: Նա վարկանիշը (2466) ավելացրել է 35-ով եւ 52-րդ տեղից տեղափոխվել է 31-րդ հորիզոնական: Իսկ ահա Լիլիթ Գալոյանը վարկանիշը (2373) նվազեցրել է 11-ով ու 78-րդ տեղից նահանջել է 90-րդ հորիզոնական:

ՖԻԴԵ-ի անդամ երկրների ցանկում Հայաստանը 2633 վարկանիշով 9-րդ տեղում է: Ցուցակը նախկինի պես գլխավորում է Ռուսաստանը (2729), որին հաջորդում են Ուկրաինան (2695), Ֆրանսիան (2653), Չինաստանը (2647), Իսրայելը (2639), ԱՄՆ-ը (2637), Հունգարիան (2637) ու Հնդկաստանը (2636): Լավագույն տասնյակը եզրափակում է Բուլղարիան (2630):

Ադրբեջանը 2630 վարկանիշով 11-րդ տեղում է, Վրաստանը (2601) 15-րդն է, Թուրքիան (2494)` 41-րդը:

# Օլիմպիականների ելույթը գնահատվեց բավարար




ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանի ղեկավարությամբ տեղի է ունեցել կազմակերպության գործկոմի հերթական նիստը: Ինչպես տեղեկացանք ՀԱՕԿ-ի լրատվության պատասխանատու Նաթելա Հովասափյանից, Սինգապուրում անցկացված օլիմպիական պատանեկան առաջին խաղերի մասնակցության արդյունքների մասին հաշվետու եղավ ՀԱՕԿ-ի փոխնախագահ, ՀՀ մարզական պատվիրակության գլխավոր հանձնակատար Դերենիկ Գաբրիելյանը: Նա հիշեցրեց, որ Հայաստանի 14 պատվիրակներ մրցեցին 12 մարզաձեւերում: Ծանրամարտում Գոռ Մինասյանը նվաճեց արծաթե, իսկ Սմբատ Մարգարյանը` բրոնզե մեդալ: Երրորդը ճանաչվեցին նաեւ ձյուդոյիստ Դավիթ Ղազարյանը եւ ազատ ոճի ըմբիշ Արտակ Հովհաննիսյանը: Հուսալի մրցելույթ ունեցավ մարմնամարզիկ Վահան Վարդանյանը, որը 24 ուժեղագույնների պայքարում 10-րդ արդյունքով մտավ եզրափակիչ եւ ի վերջո հանգրվանեց 8-րդ տեղում: Հայաստանի մյուս պատվիրակները տեղ զբաղեցրին միջին հորիզոնականներում: Դ. Գաբրիելյանը խոսեց նաեւ մեր պատվիրակությանը մշտապես աջակից եղած Սինգապուրի հայ համայնքի ներկայացուցիչների մասին:

ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանը դրական գնահատեց մեր պատվիրակների ելույթները: Այդ գործում նա կարեւորեց մեր մարզիչների, մարզիկների եւ ՀԱՕԿ-ի աշխատակազմի նպատակային աշխատանքը: Պարոն Ծառուկյանն անդրադարձավ նաեւ թերություններին: Հասկապես ընդգծեց մարզիչների վերապատրաստման, սպորտային բժշկության կարեւորությունը: Պետք է շարունակել մասնագետների համար կազմակերպել սեմինարներ ` Հայաստանում եւ արտերկրում: Մեծ ուշադրություն պետք է հասկացվի մանկապատանեկան մարզադպրոցներում հերթափոխի հետ տարվող աշխատանքներին:Պարապող աղջիկներն ու տղաներն են համալրելու մեր ազգային հավաքականները: Իսկ հաջորդ պատանեկան օլիմպիական խաղերին, որն անցկացվելու է Չինաստանի Նանկին քաղաքում, անհրաժեշտ է նախապատրաստվել այսօրվանից:

Գ. Ծառուկյանը նշեց, որ Սինգապուրի խաղերի բոլոր մեդալակիրներն ու նրանց մարզիչները կստանան համապատասխան պարգեւներ:

Հայաստանի մարզիկների մասնակցությունն առաջին պատանեկան խաղերում գործկոմը գնահատեց բավարար: Միաժամանակ ՀԱՕԿ-ին հանձնարարվեց ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարության, մարզական ֆեդերացիաների հետ վերլուծել մեր մարզիկների մասնակցությունը եւ մեկամսյա ժամկետում ներկայացնել առաջարկներ մարզիչների վերապատրաստման, մարզիկների շրջանում տարվող բժշկական, հոգեբանական աշխատանքների հետագա բարելավման, ազգային եւ միջազգային ֆեդերացիաների միջեւ կապերի ամրապնդման, գործունեության համատեղ ծրագրերի մշակման եւ հավաքականների մարզումային գործընթացի կազմակերպման համար նյութատեխնիկական բազայի ամրապնդման վերաբերյալ:

Սինգապուրի խաղերին ներկա է եղել ՄՕԿ-ի նախագահ Ժակ Ռոգեն: Նրա անունից ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանին հանձնվեց հուշանվեր:

Օրակարգի հաջորդ` ՀԱՕԿ-ի աշխատակազմում կառուցվածքային փոփոխություններ կատարելու մասին հարցը կքննարկվի հերթական նիստում:

Այս տարի լրանում է ՀԱՕԿ-ի հիմնադրման 20-ամյակը: Այդ առթիվ նախատեսված են մի շարք միջոցառումներ: Աշխատանքների կազմակերպման համար ստեղծվեց համապատասխան հանձնախումբ, որտեղ ընդգրկվեցին ՀԱՕԿ-ի փոխնախագահներն ու գործկոմի անդամները: Տոնական արարողությունները տեղի կունենան նոյեմբերի 13-14-ին: Միջոցառումներին մասնակցելու համար կհրավիրվեն ՄՕԿ-ի, ԵՎՕԿ-ի եւ միջազգային տարբեր մարզաձեւերի ֆեդերացիաների ներկայացուցիչներ:

ԲՌՆՑՔԱՄԱՐՏ

## Եկել է Ֆրոչին հաղթելու ժամանակը

Արթուր Աբրահամը շարունակում է նախապատրաստությունը Մոնակոյում Կառլ Ֆրոչի հետ կայանալիք մենամարտին: Արթուրը մարտականորեն է տրամադրված:

«Ես այն մարդկանցից չեմ, ովքեր շատ են խոսում: Հասկանում եմ այս մենամարտի արժեքը: Super Six-ում հաղթելն իմ երազանքն է: Դա իմ շարժիչն է, մեծ խթան է կյանքիս համար: Դրա համար էլ հաղթելու եմ Ֆրոչին: Նա տիրապետում է ուժեղ հարվածների եւ ինձ նման մենամարտերի մեծ մասն ավարտել է նոկաուտով: Պարտվելը սարսափելի զգացում է: Այլեւս երբեք չեմ ցանկանա այդ զգացումն ունենալ: Մենք վերլուծել ենք Անդրե Դիրելից կրած պարտության պատճառները եւ հետեւությունների ենք հանգել: Հարկավոր է ավելի խելացիորեն մենամարտել: Եկել է Ֆրոչին հաղթելու ժամանակը», հայտարարել է Արթուր Աբրահամը:

## Նվիրվում է ՀԱՕԿ-ի 20-ամյակին

Գյումրիում սեպտեմբերի 12-ին տեղի կունենա Եվրոպայի գործող ռեկորդակիր, հեռացատկորդ Ռոբերտ Էմմիյանի անվան գավաթի եւ մրցանակների միջազգային խաղարկությունը: Գյումրիի քաղաքային մարզադաշտում կայանալիք ավանդական միջոցառումը անվանի հեռացատկորդը նվիրում է Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի հիմնադրման 20-ամյակին:

Ռ. Էմմիյանի մրցանակների խաղարկության առթիվ Գյումրի կժամանեն 14 երկրների հեռացատկորդներ:

## Ռուսներն անհաջողության մատնվեցին

Թուրքիայում ընթացող բասկետբոլի տղամարդկանց աշխարհի առաջնությունում հայտնի դարձան կիսաեզրափակիչի վերջին 2 մասնակիցները: Մեդալների համար պայքարը չկարողացավ շարունակել Ռուսաստանի հավաքականը, որը 79-89 հաշվով պարտվեց ամերիկացի բասկետբոլիստներին: Այժմ ռուսները պետք է վիճարկեն 5-8-րդ տեղերը: Իսկ ԱՄՆ-ի հավաքականը կիսաեզրափակիչում ուժերը կչափի Լիտվայի ընտրանու հետ: Վերջինս 104-85 հաշվով պարտության մատնեց արգենտինացիներին: Կիսաեզրափակիչի մյուս զույգը կազմել են Սերբիան ու Թուրքիան:

## Յուժնին մարտականորեն է տրամադրված

Թենիսի ԱՄՆ-ի բաց առաջնությունում չեմպիոնի տիտղոսն առաջինը վիճարկեցին խառը զուգախաղի մասնակիցները: Հաջողությունն ուղեկցեց Լիզել Հուբեր-Բոբ Բրայան ամերիկյան զույգին, որը եզրափակիչում պարտության մատնեց Կվետա Պեշկե (Չեխիա)-Այսամ Կուրեշի երկյակին (6-4, 6-4):

Տղամարդկանց մենախաղում որոշվեցին կիսաեզրափակիչի վերջին երկու մասնակիցները: Պայքարը կշարունակի ռուսաստանցի Միխայիլ Յուժնին, որը հաղթեց շվեյցարացի Ստանիսլաս Վավրինկային (3-6, 7-6, 3-6, 6-3, 6-3): Յուժնին իր կարիերայում 2-րդ անգամ իրավունք ստացավ հանդես գալու ԱՄՆ-ի բաց առաջնության կիսաեզրափակիչում: Այս փուլում նրա մրցակիցը կլինի Ռաֆայել Նադալը, որը պարտության մատնեց իսպանացի Ֆեռնանդո Վերդասկոյին (7-5, 6-3, 6-4): Ամենայն հավանականությամբ, եզրափակիչում կհանդիպեն Նադալն ու Ֆեդերերը: Սակայն Յուժնին հայտարարել է, որ ամեն ջանք կներդնի Նադալի առջեւ փակելու եզրափակիչի ճանապարհը:

## Կեյրուշը պաշտոնանկ արվեց



Պորտուգալիայի ֆուտբոլի ֆեդերացիան խզել է պայմանագիրը երկրի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Կառլուշ Կեյրուշի հետ: Վերջինս ֆեդերացիայի կողմից մինչ այդ որակազրկվել էր 1 ամսով հակադոպինգային ծառայության աշխատանքը խոչընդոտելու համար: Հիշեցնենք, որ մինչեւ աշխարհի առաջնության մեկնելը հակադոպինգային ծառայության աշխատակիցները պորտուգալացիների մարզաբազայում ցանկացել էին մի քանի ֆուտբոլիստներից անալիզներ վերցնել, սակայն Կեյրուշը թույլ չէր տվել: Հակադոպինգային ծառայության կողմից որակազրկման ժամկետը երկարացվեց մինչեւ 6 ամիս: Կեյրուշը մտադիր էր այդ որոշումը բողոքարկել մարզական միջազգային իրավարար դատարանում:

Պորտուգալիայի ֆուտբոլի ֆեդերացիայի ղեկավարությունը ցանկանում է հավաքականի ղեկը վստահել Լուիս Արագոնեսին, որի գլխավորությամբ Իսպանիայի ընտրանին 2008-ին նվաճել էր Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը: Անցյալ տարի «Ֆեներբահչեից» հեռանալուց հետո Արագոնեսն առայժմ գործազուրկ է:

## ՖԻՖԱ-ն թերեւս վերադառնա «ոսկե գոլի» կանոնին

ՖԻՖԱ-ի նախագահ Զեպ Բլատերը հայտարարել է, որ մտադիր են վերացնել ոչ-ոքիի դեպքում լրացուցիչ ժամանակ նշանակելու ընդունված կարգը ու միանգամից 11 մ հարվածներ կատարել: Ըստ Բլատերի, շատ հանդիպումներում լրացուցիչ ժամանակում ֆուտբոլիստները խուսափում են ակտիվ պայքարից եւ հիմնական մտահոգությունը սեփական դարպասն անառիկ պահելն է, ինչը զգալիորեն նվազեցնում է խաղի գրավչությունը:

Բացառված չէ, որ կրկին վերադառնան «ոսկե գոլի» կանոնին, երբ լրացուցիչ ժամանակում խփված առաջին գոլից հետո խաղն ավարտվում էր: Հիշեցնենք, որ առաջին անգամ «ոսկե գոլի» կանոնը կիրառվել է 1996-ի Եվրոպայի առաջնությունում: Իսկ առաջին ֆուտբոլիստը, որ խփել է «ոսկե գոլը», գերմանացի Օլիվեր Բիրհոֆն էր, որը եզրափակիչում խոցեց չեխերի դարպասը: 2004-ի Եվրոպայի առաջնության ավարտից հետո «ոսկե գոլի» կանոնը վերացվեց:

## Դարպասները մնացին անառիկ

Հանքավանում կայացած Հայաստանի եւ Վրաստանի մինչեւ 17 տարեկանների պատանեկան հավաքականների ֆուտբոլի ընկերական մրցախաղում դարպասները մնացին անառիկ: Այսօր կկայանա մրցակիցների 2-րդ հանդիպումը:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ **Օրվա հետքերով**

# Պարոնայք, բա որ ասում էինք ...

*Կրկին Գյումրու Մուշ-2 թաղամասի նորակառույց բնակելիներում առկա շինարարական թերությունների մասին*

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ անցած շաբաթ, Գյումրու Մուշ-2 թաղամասում «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի կողմից կառուցված նորակառույց բնակելիներում առկա, մեղմ ասած, թերությունները ու բացթողումները ուսումնասիրելու եւ դրանք արագ վերացնելու հարցով քննարկում է տեղի ունեցել ՀՀ նախագահի եւ ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմերի համատեղ աշխատանքային նիստում: Վերջիններս նաեւ շրջայց են կատարել Մուշ-2 թաղամասում եւ առկա պատկերը ներկայացրել են հանրապետության նախագահին: Որից հետո քաղաքաշինության նախարար Վ. Վարդանյանը արտահերթ խորհրդակցություն է անցկացրել եւ հստակ հանձնարարականներ է տվել թաղամասի բնակելիներում առկա թերությունները վերացնելու ու խնդիրները հնարավորինս կարճ ժամանակում լուծելու վերաբերյալ:



«Գալա» հեռուստաընկերությանը տված հարցազրույցում քաղաքաշինության նախարարի հանձնարարականով Գյումրիում բնակարանաշինությունը վերահսկող մարմնի պատասխանատու Ա. Սարգսյանը, բացթողումների մեջ մեղադրելով հիմնականում շինարարությունն իրականացնող կազմակերպությանը, նշել է, որ թաղամասը շահագործվել է առանց ջրատար եւ կոյուղատար համակարգերի փորձարկման: Ավելին՝ նա հայտարարել է, թե ներկայումս եւս շինարարությունը իրականացվում է բացթողումներով. «արդեն երրորդ հարկն են կառուցում, բայց հստակ նախագիծ չունեն», նշել է վերահսկող մարմնի պատասխանատուն:

Ավելացնենք, որ դեռեւս բնակելի թաղամասի շահագործումից շատ ամիսներ առաջ՝ հունվարի 18-ին, «Շիրակ կենտրոն» ՀԿ-ն Գյումրիում «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի կողմից իրականացվող բնակարանաշինության սեյսմակայունության շուրջն առկա մտահոգությունների եւ դրա կի հրապարակային փորձաքննություն անցկացնելու խնդրի հետ կապված ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին եւ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին հղած բաց նամակում ահազանգել էր այն ամենի մասին, ինչի ականատեսն ենք մենք բոլորս այս օրերին Գյումրու Մուշ-2 թաղամասի բնակելիներում: Բազմաթիվ էլեկտրոնային եւ տպագիր թերթերում մեր բաց նամակի հրապարակման հենց հաջորդ օրը քաղաքաշինության նախարարի հրամանով շենքերի սեյսմակայունության համալիր ստուգումներ անցկացրին «Հայսեյսմշին» գիտահետազոտական ինստիտուտի մասնագետները՝ տալով բավարար գնահատական:

Այսօր եւս, կարծում եմ, նամակում առաջ քաշված հարցերը մնում են արդիական եւ կարող են վերաբերել նաեւ ներկայումս Գյումրիում նույն շինկազմակերպության կողմից իրականացվող աշխատանքներին, ուստի որոշեցի այդ նամակից մի փոքր մեջբերում կրկին հրապարակել. «2009 թվականին, երբ աղետի գոտում եւ հատկապես Գյումրիում երկարատեւ դադարից հետո վերջապես վերսկսվեց բնակարանների կառուցումը, ցուրտ ու խոնավ տնակներում արդեն երկու տասնամյակ պատսպարված անօթեւան հազարավոր ընտանիքներում կրկին հույս ու հավատ արթնացավ, որ ի վերջո իրենք եւս կունենան ամուր, հարմարավետ եւ լուսավոր բնակարաններ: Սակայն դեռեւս շինարարության ընթացքում գյումրեցի անօթեւան ընտանիքների շրջանում խուսակցություն տարածվեց կառուցվող բնակարանների կասկածելի որակ ունենալու մասին»:

Նամակում նաեւ առաջարկել էինք ստեղծել մի հանձնաժողով, որը կանցկացնի ինչպես արդեն կառուցված ու կառուցվող, այնպես էլ առաջիկայում կառուցվելիք շենքերի որակի, ամրության ու սեյսմակայունության հրապարակային ստուգումներ, եւ արդյունքները կհանրայնացվեն: Ի դեպ, ինչպես այս նամակն ամբողջությամբ, այնպես էլ Մուշ-2 թաղամասին ու Գյումրիում բնակարանների բաշխման գործընթացին վերաբերող բազմաթիվ այլ նյութեր, այդ թվում նաեւ ընթացիկ տարում բնակարան ստացած ընտանիքների ամբողջ ցուցակը, տեղադրված են www.shirakcentre.org վեբ կայքում:

**Հ.Գ.** Մեր խորին համոզմամբ՝ անորակ շինարարության իրականացմանը նպաստեց նաեւ այն հանգամանքը, որ «Գլենդել Հիլզը» աշխատեց փակ ռեժիմով՝ շինհրապարակի դռները երբեւէ չբացելով անգամ լրատվամիջոցների առջեւ:

**ՎԱՀԱՆ ԹՈՒՄԱՍՅԱՆ**
**«Շիրակ կենտրոն» ՀԿ-ի նախագահ**

## ԵՐԵՎԱՆ

# Երեւանում բացվեց անասնաբուժական հակահամաճարակային եւ ախտորոշիչ կենտրոն

**ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի մասնակցությամբ Երեւանում բացվել է հանրապետական անասնաբուժական հակահամաճարակային եւ ախտորոշիչ կենտրոնը: Այն վերակառուցվել է Եվրոմիության տրամադրած «Թռչնի եւ մարդու գրիպի դեմ պայքարի» դրամաշնորհի միջոցով, նաեւ Համաշխարհային բանկի, Ճապոնիայի տեխնիկական աջակցության PHRD, «Թռչնագրիպի ու մարդու գրիպի կազմակերպության բազմադոնորային հիմնադրամի դրամաշնորհների ֆինանսավորմամբ՝ 1,5 միլիոն ԱՄՆ դոլար: Կենտրոնի տնօրեն՝ Հովհաննես Հակոբյանի փոխանցմամբ՝ այս կենտրոնը համապատասխանում է Եվրոմիության ISO:17025 չափորոշիչին, այսինքն՝ կենսաանվտանգության երկրորդ մակարդակի լաբորատորիաների պահանջներին: Բացման արարողությանը ներկա է եղել նաեւ ՀԲ Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի փոխնախագահի Ֆիլիպ լե Ուերուն: Վերջինս եւ Տիգրան Սարգսյանը շրջել են շենքում, ծանոթացել աշխատանքային պայմաններին:**



**Արդիականացված եւ հիմնանորոգված կենտրոնը նախկին 700 քմ տարածքի փոխարեն հիմա զբաղեցնում է շուրջ 3200 քմ տարածք:**

**Ի. Պ.**

# Հոկտեմբերից ավտոապահովագրման գործընթացը կսկսվի

**2011-ի հունվարի 1-ից Հայաստանում կսկսի գործել ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրությունը (ԱՊՊԱ): Այդ կապակցությամբ Կենտրոնական բանկը տեղեկատվական եւ ուսուցման գործընթաց է սկսել, որի շրջանակներում երեկ լրագրողներին ներկայացվեց, թե ի՞նչ է ԱՊՊԱ-ն, ինչպե՞ս է իրականացվելու Հայաստանում, եւ ի՞նչ հարցեր կարող են առաջանալ:**

**Սեմինարի ժամանակ նախ ներկայացվեցին ԱՊՊԱ համակարգի ներդրման հիմնախնդիրները եւ միջազգային փորձը: Մասնավորապես նշվեց, որ այն նախ եւ առաջ ճանապարհատրանսպորտային պատահարներից տուժողի համար երաշխավորում է վնասների հատուցում: Խոսքը անձնական վնասների՝ կյանքին եւ առողջությանը հասցված, եւ գույքային վնասների մասին է: Հայաստանի համար որպես ԱՊՊԱ մոդելային համակարգ ընտրվել է CREEN CARD համակարգը, որն ընդունված է բազմաթիվ երկրներում:**

**Ավտոապահովագրության պայմանագրեր պետք է կնքեն ավտոտրանսպորտային միջոցների սեփականատերերը, ավտոտրանսպորտային միջոցներ ներմուծողները եւ ֆինանսական վարձակալության՝ լիզինգի դեպքում՝ վարձակալները: Պայմանագիրը ապահովագրական ընկերությունների հետ կնքվում է նվազագույնը 3 ամսով, առավելագույնը՝ 1 տարով, ինչպես նաեւ 10 օր ժամկետով, եթե ավտոմեքենան Հայաստան է ներմուծվել «տարանցիկ փոխադրում» եւ «ժամանակավոր ներմուծում» ռեժիմներով եւ տրանսպորտային միջոցների առեւտրով զբաղվող իրավաբանական անձանց կողմից: Լրագրողները տեղեկացան, որ հոկտեմբեր ամսից վերոնշյալ անձինք եւ կազմակերպությունները պետք է սկսեն պայմանագրերի կնքման եւ պոլիսների ձեռքբերման գործընթացը, որպեսզի մինչեւ եկող տարվա հունվարի 1-ը բոլոր հաշվառված մեքենաներն արդեն ունենան պայմանագրեր:**

**Ա. Ս.**

# «Վիվասել-ՄՏՍ»-ն առաջարկում է անսահմանափակ ինտերնետ՝ մատչելի գներով

*«ՄՏՍ կոնեկտ 128»՝ ամսական 5000 դրամ*

**Ինչպես տեղեկացանք «Վիվասել-ՄՏՍ»-ից, այսուհետեւ, բաժանորդագրվելով նոր «ՄՏՍ կոնեկտ 128» հետվճարային սակագնային պլանին, ընդամենը 5000 դրամ ամսավճարի դիմաց կարելի է օգտվել անսահմանափակ անլար ինտերնետից: Սակագնային պլանի շրջանակներում տվյալների փոխանցման առավելագույն արագությունն է 128 Կբիթ/վրկ: «ՄՏՍ կոնեկտ 128» սակագնային պլանին մեկ տարով բաժանորդագրվելու դեպքում «ՄՏՍ կոնեկտ» մոդեմը կտրամադրվի անվճար:**

**Բացի անսահմանափակ ինտերնետից, սակագնային պլանի բաժանորդները ստանում են նաեւ անմիջապես համակարգչից SMS ուղարկելու եւ ստանալու հնարավորություն՝ 1 SMS-ը 5 դրամ «Վիվասել-ՄՏՍ»-ի ցանցում եւ 20 դրամ՝ այլ ուղղություններով:**

**«Այս հարմարավետ սակագնային պլանը «Վիվասել-ՄՏՍ»-ի հերթական առաջարկն է, որի նպատակը Հայաստանի բնակչությանը մատչելի եւ հուսալի ինտերնետ հասանելիության ծառայությունների տրամադրումն է երկրի ողջ տարածքում սփռում ունեցող 2,5G ցանցի եւ երկրի բնակելի տարածքների 92 տոկոսում կամ 650 բնակավայրերում գերազանց որակ ապահովող 3,5G ցանցի միջոցով: Անլար լայնաշերտ ինտերնետի հնարավորությունների հետ համատեղելի մատչելի սարքերը եւ սակագները կխթանեն մեր երկրում բարձրակարգ ինտերնետի ներթափանցումը: Մեր առաքելությունը դուրս է գալիս բիզնեսի սահմաններից. մենք ցանկանում ենք, որ Հայաստանում բոլորն ունենան հուսալի եւ արագ ինտերնետի հնարավորություն՝ անգամ մեր երկրի ամենահեռավոր վայրերում», նշել է «Վիվասել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:**

**Մեր կողմից ավելացնենք, որ «Վիվասել-ՄՏՍ»-ի այս նոր սակագնային պլանը, փաստորեն, ներկայումս շուկայի ամենացածր սակագինն ունեցող առաջարկն է:**

**Ա. Ս.**

Օրեր առաջ «Արաբկիր» բժշկական համալիր տեղափոխվեցին մանկահասակ երեք երեխաներ, որոնցից մեկի մոտ հայտնաբերվեց ցերեբելիս հիվանդության ախտանիշ, որը երեխայի մոտ առաջ էր բերել հենաշարժական ֆունկցիայի խանգարում: Բժշկական համալիրի բուժանձնակազմի տրտացավ վերաբերմունքի շնորհիվ փոքրիկ Ստեփանն այսօր ապաքինված տուն է վերադարձել: Գալոյանների եւ Ղազարյանների ընտանիքներն իրենց խորին երախտագիտությունն են հայտնում ՀՀ առողջապահության նախարար Հարություն Քուշկյանին, «Արաբկիր» բժշկական համալիրի տնօրեն Արա Բաբլոյանին, վերակենդանացման բաժանմունքի վարիչ Աշոտ Գյուլբուդաղյանին, նյարդաբան Նունե Աղաբաբյանին՝ ջերմ, մարդասիրական վերաբերմունքի եւ Հիպոկրատի երդմանը հավատարիմ մնալու համար:

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2010թ. սեպտեմբերի 13-ին եւ սեպտեմբերի 20-ին հայտարարված աճուրդները համապատասխանաբար տեղի կունենան 2010թ. սեպտեմբերի 11-ին եւ սեպտեմբերի 18-ին:

*ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ*

## «Նոյյան տապան» Մեդիա միավորումը հայտարարում է բարձրագույն որակավորման դասընթացների ընդունելություն

«Նոյյան տապան» Մեդիա միավորումը հայտարարում է «Լրատվության եւ մեդիա ոլորտի այլ մասնագիտություններով աշխատողների բարձրագույն որակավորման դասընթացների» ընդունելություն:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 1-ից:

Ընդունելությունն անցկացվում է հետեւյալ մասնագիտություններով.

Լրագրություն, այդ թվում տպագիր մամուլի, հեռուստա -, ռադիո- եւ on-line

1. լրագրող
2. խմբագիր
3. թարգմանիչ
4. հեռուստաօպերատոր եւ մոնտաժող
5. Հեռուստահաղորդավար
6. Գովազդային մենեջեր եւ PR
7. Մեդիա մենեջեր

Ուսուցումը տարցիոնար է, ուսման ժամկետը 6 ամիս: Ուսուցումը վճարովի է:

Դասընթացներն ավարտողները կստանան համապատասխան վկայականներ:

Հասցե. ք. Երեւան, Իսահակյան 28

էլ.փոստ՝ info@nt.am, 777info@.am

Մանրամասն տեղեկությունների համար զանգահարել 565965, 524279 հեռախոսահամարներով՝ ժամը 10.00-ից մինչեւ 17.00-ն (բացի շաբաթ եւ կիրակի օրերից):

## Հայտարարություն

Սույն թվականի սեպտեմբերի 15-ին, ժամը 12.00 ին տեղի կունենա **«Սիրարփի ԱՀ» ՍՊԸ-ին** պատկանող ՓՀԷԿ-ի կառուցման նախագծերի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ք.Երևան Կոմիտաս 29 հասցեում: Հեռ. 22-15-68

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 10.09.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: